

*“ՀԿ Կենտրոն” Քաղաքացիական հասարակության
զարգացման կազմակերպություն*

**«Կանանց եւ երիտասարդների առաջնորդության
կարողությունների զարգացում»
ծրագրի շրջանակներում կատարված**

**Լոռի և Տավուշ մարզերում՝
քաղաքականության մշակման նորոշումների կայացման
գործընթացներում կանանց երիտասարդների
արդյունավետ ներգրավման խնդիրների և
կարիքների գնահատման արդյունքները**

Հաշվետվությունը պատրաստել են

Արփինե Հակոբյանը

Գայանե Մարտիրոսյանը



2011թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

 Ծրագրինպատակը3

 Խղիքները.....3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿ և ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

 ՆՊԱՏԱԿ3

 ԳՆԱՀԱՏՄԱՆՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ4

ՊԵՏԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՆԱՆՑ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ. ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ և ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 7

 ՊԵՏԱԿԱՆՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....7

 ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՀԱՍԱՐԿՈՒԹՅԱՆՀԵՏ11

ԿԱՆԱՆՑ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ԼՈՌՈՒ և ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ.15

 Որոշումներիկայացմանըևքաղաքականություններիմշակմանըկանանցներիտասարդներիմասնակցությանկարևորումը..... 15

 Ազդեցությունըորոշումներիկայացմանվրականանցներիտասարդներինընդգրկելուպարագայում ..20

 Քաղաքականությանմշակմանըևորոշումներիկայացմանըընդրկվածկանանցներիտասարադներինընդորոշողհատկանիշներ22

 Կանանցներիտասարդներինընկալումըքաղաքականությանմշակմանըևորոշումներիկայացմանըմասնակցելուսեփականմասնակցությանվերաբերյալ.....24

 Կանանցներիտասարդներիմասնակցությունըխոչընդոտողև/ կամխթանողհանգամանքներ25

 Օրենսդրական26

 Սոցիալ-տնտեսականգործոն.....27

 Մշակութային.....29

Երիտասարդների ցածր մասնակցության պատճառները.....32

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ԻՆՉՊԵՄԽԹԱՆԵԼ ԿԱՆԱՆՑԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն 2011թ օգոստոս – դեկտեմբեր ամիսներին նախաձեռնել է «Կանանց եւ երիտասարդների առաջնորդության կարողությունների զարգացում» ծրագրի իրագործումը, որը ֆինանսավորվում է «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի» (UNDP) կողմից:

Նպատակ`

«Կանանց եւ երիտասարդների առաջնորդության կարողությունների զարգացում» ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիական հասարակության եւ կառավարության միջեւ երկխոսությանը` այդ գործընթացում կանանց եւ երիտասարդության արդյունավետ մասնակցության միջոցով:

Խնդիրներն են`

- Լոռու և Տավուշի մարզերում վազմակերպել քննարկումներ տեղական քաղաքականության մշակմանն ուղղված երկայնամյա գործընթացներում կանանց եւ երիտասարդների ներգրավվածության վերաբերյալ` կարիքների գնահատմանն ինդիքների վերհանման նպատակով:
- Զարգացնել Լոռու և Տավուշի մարզերի մոտ 80 կանանց եւ երիտասարդների կարողությունները` տեղական զարգացման գործընթացների ներկայություններին նրանցիմաստալից կերպով մասնակցելուն նպատակով:
- Կարողությունների զարգացման ծրագրերի միջոցով բարձրացնել Լոռու և Տավուշի մարզերի տեղական զարգացման գործընթացներին կանանց եւ երիտասարդների մասնակցության մակարդակը. օրինակ. սեփական համայնքների զարգացման քառամյա ծրագրերի մշակման , ավագանու նիստերին նայլ գործընթացներին մասնակցության միջոցով:

Մույն փաստաթուղթը արտացոլում է Լոռու և Տավուշի մարզերում իրականացված քննարկումների պատկերը` ամփոփելով տեղական մակարդակում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում կանանց եւ երիտասարդների մասնակցությանն առնչվող ինդիքների և կարիքների գնահատման հիմնական արդյունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԵՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

Գնահատման նպատակն էր բացահայտել Լոռու և Տավուշի մարզերում կանանց ու երիտասարդների կարիքները տեղական և հանրապետական մակարդակներում քաղաքականությունների մշակմանն ու ձևավերմանը ներգրավվելու գործընթացներում:

Այս հետազոտության արդյունքները թույլ կտան տարբեր շահագրգիռ կողմերին՝ տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններին և կառավարական կառույցներին մշակել և ներ դնել այնպիսի կարողությունների զարգացման ռազմավարություններ և մոտեցումներ, որոնք կավելացնեն կանանց և երիտասարդների ներգրավումը տեղական մակարդակում քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարիքների գնահատումն իրականացվել է որակական մեթոդների կիրառմամբ , հետևաբար, հավաքված տեղեկատվությունը ենթարկվել է որակական վերլուծության:

Տեղեկատվության հավաքագրման նպատակով կատարվել է.

ա/փաստաթղթերի վերլուծություն,

բ/փորձագիտական հարցում

գ/Ֆոկուս խմբային քննարկում:

ա/Փաստաթղթերի վերլուծություն. նպատակն էր ուսումնասիրել ՀՀ-ում երիտասարդների եւ կանանց ինքնաիրացման համար նպաստավոր առկա սոցիալական, տնտեսական, քաղաքական եւ մշակութային միջավայրը և, ապառչ առևտրային կազմակերպությունների կողմից կիրարկված մեխանիզմներն ու մոտեցումները:

Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը ներկայացնում ենք ստորև.

- Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիր,
- Հայեցակարգ Գենդերային քաղաքականության, Երևան 2010, Հայաստանի հանրապետության կառավարություն
- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին օրենքի նախագիծը (Կ-1259-13.10.2011-ՄԻ-010/0):
- Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը (1998),
- “Հայաստանում սոցիալական միասնության վերաբերյալ ուսումնասիրություն “ 2011, ՄԱԶԾ, իրականացված ՀՌԿԿ-ի կողմից
- “Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” զեկույց, “Կովկաս ” հասարակագիտական հետազոտությունների կենտրոն, ՓՉԹ
- § Անդրեմ գենդերային բռնության հարավային Կովկասում” ծրագրի շրջանակներում Երևան, 2011
- «Գենդերային բռնության հիմնախնդիրը Հայաստանի ՁԼՄ-ների ներկայացման զեկույց», ք. Երևան, 2010

- “Հայաստանում միասարակ կանաչ քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” զեկույց, “Կովկաս” հասարակագիտական հետազոտությունների կենտրոն, “Ընդդեմ գենդերային բռնության հարավային Կովկասում” ծրագրի շրջանակներում, ք. Երևան 2011թ
- Կանանց ներիտասարդների հիմնահարցերով զբաղվող շառնտրային կազմակերպությունների էլեկտրոնային կայքերը: (“Հայաստանի Երիտասարդ կանանց Ասոցացիա” NGO - <http://www.aywa.am/>; Կանանց Ռեսուրսային Կենտրոն - <http://www.womenofarmenia.org/en/>; Երիտասարդական նվաճումներ ՀԿ):
- Իջևան քաղաքի երիտասարդության քաղաքականությունը 2007-2010թթ¹

բ/Փորձագիտական հարցում². նպատակն էր ուսումնասիրել ՀՀ-ում, մասնավորապես Լոռու և Տավուշի մարզերում, տեղական մակարդակում քաղաքականությունների մշակման և կառավարման ոլորտում կանանց և երիտասարդների ներգրավվածության հնարավորությունները, կիրառվող մեխանիզմներն ու մոտեցումները, ինչպես նաև՝ այն կարողություններն ու հմտությունները, որը ապահովում է թիրախ խմբերի ներգրավումը քաղաքականությունների մշակման գործընթացում: Էքսպերտային հարցումը միտում ուներ բացահայտելու քաղաքացիական հասարակության դաշտում, ինչպես նաև քաղաքական ասպարեզում հաջողության հասնելու համար անրաժեշտ պայմանները, ինչպես նաև մարդկային որակները և միաժամանակ բացահայտել, թե ինչպես են ընդունված օրենքները, ներ դրված քաղաքականությունները կիրարկվում իրական կյանքում:

Որպես փորձագետներ հանդես են եկել.

- Վանաձորի Իջևանի ավագանու անդամները,
- Լոռու և Տավուշի մարզպետարանների բաժինների ղեկավարները,
- տեղական շառնտրային կազմակերպությունների ղեկավարները,
 - «Կին առաջնորդ ֆորումի» անդամները,
 - «Երիտասարդական առաջնորդության ֆորումի» անդամները:

Փորձագետների ընտրության ընթացակարգը

¹ Իջևանի Երիտասարդական քաղաքականությունը մշակվել է Քաունթերփարթի կողմից իրականացված Շահերի պաշտպանության ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրված մարզերի մյուս քաղաքներում երիտասարդական քաղաքականություն որպես առանձին փաստաթուղթ առկա չի եղել:

² Փորձագետը այս հետազոտության դեպքում դիտարկվել է յուրաքանչյուր ոք, ով հետազոտվող ոլորտի վերաբերյալ ունի փորձ, ծավալուն և հավաստի գիտելիք և/կամ հաջողության է հասել քաղաքական կամ քաղաքացիական գործունեության ոլորտներում:

Փորձագիտական հարցման իրականացման նպատակով կազմվել է Վանաձորի և Իջևանի ավագանիների և Լոռու ու Տավուշի մարզպետարանների բաժնի ղեկավարների անվանացանկ:Ցուցակները բաժանվել են 3 մասի՝ հետևյալ չափանիշներով. (1) կին, (2) 21 - 30 տարեկան ավագանի³ և 18-30 տարեկան մարզպետարանի աշխատակից տղամարդ և (3) 30-ից բարձր տղամարդ :Ավագանիների ցուցակից ընտրվել են յուրաքանչյուր խմբից մեկական ռեսպոնդենտ՝ հաշվի առնելով ոլորտում փորձառության ժամանակահատվածը. ընդգրկվել են ինչպես մեկ անգամ ավագանի հանդիսացող անձիք, այնպես էլ 2 և ավելի անգամ ավագանի հանդիսացող անձիք, այսինքն՝ 6 ավագանի ռեսպոնդենտ երկու քաղաքներից, ինչպես նաև 5 ներկայացուցիչներ մարզպետարաններից. 2 ներկայացուցիչ Վանաձորի և 3 Իջևանի, ընդհանուր առմամբ 11 ռեսպոնդենտ Չունենալով որևէ կին ներկայացուցիչ Լոռու մարզպետարանում որպես բաժնի ղեկավար՝ հարցազրույցն իրականացվել է միայն երկու խմբերի ներկայացուցիչների հետ. մարզպետի օգնական (18- 30 տարեկան) և «Կանանց և երիտասարդների իրավունքների պաշտպանության» բաժնի պետ(30 տարեկանից բարձր): Տավուշի մարզպետարանում որպես ռեսպոնդենտներ հանդիսացել են մարզպետի օգնականը (18- 30 տարեկան),«Կանանց և երիտասարդների իրավունքների պաշտպանության» բաժնի պետը (30 տարեկանից բարձր) և մարզպետարանի առողջապահության բաժնի վարիչը (կին):

Գ/ Ֆոկուսխմբեր. նպատակն էր պարզել կանանց և երիտասարդների որոշումների կայացման գործընթացում ընդգրկման մարզային մոտեցումները, վերջիններիս գործող և չգործող բաղադրիչները, թիրախ խմբերի մոտեցումները քաղաքականության և որոշումների կայացման գործընթացում իրենց ներգրավման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև տղամարդկանց մոտեցումը կանանց այդ ոլորտում ինքնիրացման հարցում:

Որպես ֆոկուս խմբի մասնակիցներ հանդես են եկել՝

- տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նթեկնածություն առաջադրած նշանակման ավագանիների տասարդները, յուրաքանչյուր քաղաքում մեկական խումբ 12-15 մասնակիցներով
- երիտասարդների, կանանց և տղամարդկանց մեկական խմբեր Լոռու և Տավուշի մարզում, յուրաքանչյուրում 6-12 մասնակից:

³ ՀՀ Մարզպետական օրենսգրքի Գլուխ 26,

Հոդվա Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին առաջադրվող պահանջները,

Ճ 132. 2. Համայնքի ավագանու անդամ կարող են ընտրվել 21 տարի նրագած, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստորում մինչև վերջին կարևոր ժամանակահատվածը ընդհանուր առմամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք

Ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրության չափանիշները.

Կանանց և տղամարդկանց Ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրության չափանիշները ներկայացված են

ընտանեկան կարգավիճակը	ամուսնացած, չամուսնացած
տարիքը	18-50
կրթությունը	միջնակարգ, միջնակարգ մասնագիտական, բարձրագույն
զբաղվածությունը	Գործազուրկ աշխատող – ՀԿոլորտ, բիզնես, ՏԻՄ, գործադիր իշխանություն, ոչ առևտրային պետական հաստատություններ

Երիտասարդների ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրության համար չափանիշ են հանդիսացել.

- Սեռը. ապահովվել է հավասար քանակի ներկայացուցիչներ 2 սեռերից
- Տարիքը. 18-30 տարեկան
- Զբաղվածությունը. ուսանող, տարբեր ոլորտների աշխատողներ, չաշխատողներ

ՊԵՏԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԵՐՈՎ ԿԱՆ ԱՆՑԻՆԵՐԻ ՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆ ԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ. ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՆՈՒԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1993թ. Հայաստանը վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, հետևաբար ստանձնելով որոշակի պարտավորություններ կատարելու համապատասխան փոփոխություններ օրենսդրության և ներքին քաղաքականության մեջ: Ի թիվս այլ փոփոխությունների, ամրագրվեց ՀՀ սահմանադրության 14-րդ հոդվածը, որի համաձայն. արգելվում է յուրաքանչյուր խտրականություն, այդ թվում՝ սեռի հատկանիշով:

ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 11-ի նիստի թիվ 5 արձանագրային որոշման համաձայն գենդերային քաղաքականության հայեցակարգին տրվել է հավանություն, որը սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը և ուղղված է

հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ սեռից:

ՀՀ գենդերային քաղաքականությունը կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում ուղղված է եղել կառավարման համակարգում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովմանը, կանանց հնարավորությունների ընդլայնմանը իշխանության կառույցների որոշումների ընդունման մակարդակում ժողովրդավարացման և պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով:

Օրենսդրական իշխանությունում կանանց ներկայացվածությունը ընդլայնելու նպատակով փոփոխություններ են կատարվել ՀՀ ընտրական օրենսգրքում. ՀՀ ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունների առաջադրած թեկնածուների ցուցակներում կանանց նվազագույն քվոտան սահմանելով 20%: Բավականին հետքքքի տվյալներ են քվոտաների վերաբերյալ արձանագրել տարբեր հետազոտության արդյունքները, համաձայն մեկի հարցման մասնակիցների 57,2%-տոկոսը դրական է վերաբերվում քվոտաներ սահմանելուն և միայն 11,2%-ը ունի բացասական վերաբերմունք: Կանանց համար քվոտաների սահմանման գաղափարին դրականորեն են վերաբերվում առանձնապես հասարակական-քաղաքական իրադարձություններով մշտապես հետաքրքրվողները 68,9%, ոչ կառավարական կազմակերպությունների անդամները 65, 6%: Ընդ որում կողմ են կանանց 60,3 % և տղամարդկանց 53,5 %:⁴

Երիտասարդներին ներգրավելու նպատակով ընտրական օրենսգրքում քվոտաներ սահմանված չեն: Վերջիններիս մասնակցության/ներգրավվածության հիմնական ձևը քաղաքացիական նախաձեռնություններում հանդես գալն է, այդ թվում պետական կառույցներին կից ստեղծված խորհուրդների, կուսակցությունների երիտասարդական թևերի, ուսանողական խորհուրդների կամ խորհրդակցական խմբերի կազմում ներգրավվելու միջոցով: Քաղաքականության մշակմանը երիտասարդների մասնակցելու ամենակնառու դեպքերից մեկն է երիտասարդների մասնակցությունը Երիտասարդական քաղաքականության մշակմանը:

Սկսած 2007թվականից Երիտասարդական քաղաքականության հիմնական պատասխանատու է հանդիսանում Երիտասարդության և Սպորտի նախարարությունը: 2004թ. մասնակցային ճանապարհով նախարարությունը մշակեց “2005 – 2007թթ. Երիտասարդական Քաղաքականությունը”, որը հանդիսացավ երիտասարդությանը

⁴“Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” գեկույց, Երևան 2011, էջ 16

վերաբերող առաջին ռազմավարական փաստաթուղթ: Այնուհետև մշակվեց “2008-2012թթ. Երիտասարդական քաղաքականությունը”, որում ամրագրվեցին հետևյալ չորս առաջնայնությունները՝ երիտասարդներին որակյալ կրթություն ստանալու հնարավորության ընդլայնում, նոր աշխատատեղերի ստեղծում և աջակցել աշխատաշուկայի բարելավմանը, բարելավել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակը, խրախուսել առողջ ապրելակերպը, ինչպես նաև երիտասարդների հայրենասիրական դաստիարակությունը:

«ՀՀ կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրի» համաձայն ձեռնարկված միջոցները նախադրյալներ են ստեղծել կառավարման ոլորտում կանանց ներկայացվածության ընդլայնման համար, նպաստել են նրանց մասնագիտական և պաշտոնական առաջխաղացմանը: Նպատակաուղղված աշխատանքը հանգեցրել է տղամարդկանց (51,5%) և կանանց (48,5%) հավասարակշռված ներկայացվածության քաղաքացիական ծառայողների բոլոր կատեգորիաներում: Մեծացել է կանանց թիվը գործադիր իշխանության քաղաքական որոշումների ընդունման մակարդակում⁵:

Որպես քաղաքական և սոցիալական ակտիվության ցուցանիշ շատ հաճախ դիտարկվում է որպես ընտրող մասնակցությունը տարբեր մակարդակների ընտրություններին: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ ցուցանիշները տղամարդկանց և կանանց դեպքում գրեթե չեն տարբերվում:⁶

Այսուհանդերձ, չնայած ձեռնարկված միջոցառումներին, կառավարման համակարգում և որոշումների ընդունման մակարդակում կանանց և երիտասարդների ներկայացվածությունը Լոռու և Տավուշի մարզերում հեռու է հավասարակշռված լինելուց:

Գենդերային և տարիքային անհավասարությունը հստակորեն պահպանվում է քաղաքապետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար պաշտոններում:

Լոռու	8	և Տավուշի	5 քաղաքների բոլոր քաղաքապետերը
30 տարեկան անցարական սեռի ներկայացուցիչներ են:			

Լոռու	105	և Տավուշի	57
գյուղերի գյուղապետերից զական սեռի ներկայացուցիչներ են համապատասխանաբար			

⁵ Հայեցակարգ Գենդերային քաղաքականության, Երևան 2010

⁶ “Հայաստանում միասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” զեկույց, Երևան 2011

6/5.7%/ն1/1,7%/:

Յուրաքանչյուր մարզի մեկական գյուղում ունենք միայն երիտասարդ համայնքապետ, իսկ 30 տարեկանից բարձր արական սեռի գյուղապետերը համապատասխանաբար 98 /93%/ և 55 /96,4%/- հոգի են:

Վանաձորի քաղաքապետարանի 12
բաժինների ղեկավարներից նշվել է իգական սեռի ներկայացուցիչ է, 11-ը՝
30 տարեկան նանց արական սեռի ներկայացուցիչներ են միայն մեկն էրիտասարդ:

Իջևանի քաղաքապետարանի 4
բաժիններից մեկը ղեկավարում է իգական սեռի ներկայացուցիչ, իսկ մյուս 3-ը /75%/՝
30 տարեկան նանց տղամարդիկ:

Քաղաքային ավագանիների 29 ներկայացուցիչներից միայն 3-ն /10%/ են իգական սեռի, 9-ը
/31%/՝ երիտասարդ, իսկ 19-ը /59%/՝ 35
տարեկան նանց արական սեռի ներկայացուցիչներ են:⁷

Այսպես օրինակ, Վանաձորի ավագանու անդամները 14-ն են, որոնցից միայն 1 է իգական սեռի ներկայացուցիչ, մինչև 30 տարեկան ներկայացուցիչները՝ 6-ն են, իսկ 30-ից բարձրերը՝ 7: Մինևույն ժամանակ, նույն ընտրությունների թեկնածուները եղել են 58-ը, որոնցից՝ 3 իգական սեռի ներկայացուցիչներ, 19 -ը մինչև 30 տարեկան, իսկ 36-ը՝ 30 տարեկան նանց արական սեռի ներկայացուցիչներ:⁸

Իջևանի ավագանու անդամները 15-ն են, որոնցից 2-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ, 3-ը՝ մինչև 30 տարեկան, 12-ը՝ 30 տարեկանից բարձր արական սեռի ներկայացուցիչներ:

Գործադիր իշխանության համակարգում ևս շարունակում է անհավասարակշռված մնալ ինչպես կանանց և տղամարդկանց, այնպես էլ երիտասարդների և միջին տարիքի տղամարդկանց ներկայացվածությունը տարբեր պաշտոններում: Այսպես.

Լոռու մարզապետարանում 7 վարչություն, որոնց բոլորի ղեկավարները 30 տարեկան նանց արական սեռի ներկայացուցիչներ են:

⁷Տվյալները՝ հետևյալ պաշտոնական կայքերից՝ <http://tavush.gov.am/>, <http://lori.gov.am/>, <http://www.elections.am/>, <http://www.elections.am/ElectionsList.aspx>, <http://www.vanadzor.am/am/members-of-council>
⁸<http://www.elections.am/SelfGovernmentBodie.aspx>

Տավուշի մարզպետարանի 7

վարչությունից միայն մեկն էր եկավ արումի գական սետրներ կայացուցիչ խսկմյուսները՝
30 տարեկան իգբարձրարական սետիներ կայացուցիչներ են:՝

Այսպիսով՝ չնայած այն բանի, որ Հայաստանի Հանրապետությունը հայեցակարգերի և քաղաքականությունների մակարդակում ունի կանանց և երիտասարդներին որոշումների կայացմանը հավասարապես ներգրավելու իրական և ամրագրված նախադրայլներ, վերջիններիս ներկայացվածությունը դեռևս օրհասական խնդիր է: Կանայք ու երիտասարդները շարունակում են նվազագույնս ներկայացված լինել տեղական և հանրապետական մակարդակում որոշումների կայացմանն անմիջականորեն առնչվող գործառույթներից:

Գենդերային և տարիքային անհավասարությունը հստակորեն պահպանվում է նախարարությունների, մարզպետարանների, քաղաքապետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար պաշտոններում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Վերը ներկայացված բաժնում արտացոլված են կանանց և երիտասարդների մասնակցությունը պետական/ կառավարական ինստիտուտներում: Այս բաժինը կանդրադառնա նույն խմբի ներկայացվածությանը քաղաքացիական հասարակության կառույցներում: Սույն ուսումնասիրության առարկա են հանդիսացել այնպիսի նախաձեռնություններ, որոնք աչքի են ընկնում մասշտաբով (աշխարհագրական բաշխվածության տեսանկյունից ծածկում են մի քանի մարզեր կամ բոլոր մարզերը միանգամից, այսպիսով շահառու խումբ դարձնելով համայնքաբնակ շահառուների մեծ խմբեր), ազդեցությամբ (կարողությունների զարգացում, ներգրավում քաղաքականությունների մշակմանը և վերահսկմանը տեղական և ազգային մակարդակներում) և նշվել են ուսումնասիրու հարցմանը մասնակցած էքսպերտների կողմից:

Երիտասարդական գործողությունների ակումբներ ի նպաստ համայնքների զարգացմանը

⁹ Մարզպետարանները մինչև 2010թ. ունեցել են այլ կառուցվածք, մասնավորապես, որոշ բաժիններ եղել են առանձին, որոնք ներկայումս միավորված են վարչության՝ անվան տակ: Ներկայումս բոլոր մարզպետարաններն ունեն նույն կառուցվածքը. 7 վարչություն՝ յուրաքանչյուրում 2-3 բաժին:

Տավուշի և Լոռու մարզերի գյուղական համայնքներում ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ դեռևս 2004 թվականից ձևավորվել են և մինչ օրս գործում են Երիտասարդական գործողությունների ակումբներ, որոնց առաքելությունն է նպաստել համայնքների զարգացմանը՝ քաղաքացիական մասնակցությունը և ակտիվությունը խթանելու, համայնքը համախմբելու և մոբիլիզացնելու, կամավորականությունը խրախուսելու և քաղաքացիական նախաձեռնություններ իրականացնելու միջոցով: Մինչ օրս, խմբերում ներգրավված կամավորները պլանավորել և իրականացրել են համայնքի զարգացմանը նպաստող բազմաթիվ նախաձեռնություններ՝ ուղղված համայնքի մաքրմանը, կանաչապատմանը, տարբեր ոլորտներում համայնքի բնակիչների իրազեկության բարձրացմանը, ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելության իրականացմանը, համայնքների բնակչության ակտիվացմանը և ներգրավմանը քաղաքականության ձևավորման երկխոսություններում՝ տեղական և հանրապետական մակարդակներում:

Երիտասարդական Համակարգող Խորհուրդ

Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (NDI – National Democratic Institute) Երիտասարդական առաջնորդության ծրագիրը միտում ունի դաստիարակել ապագա քաղաքական առաջնորդներ, մշակել և իրականացնել քաղաքական կուսակցություններում և հասարակական կազմակերպություններում երիտասարդների առաջնորդող դերը ընդլայնող ռազմավարություններ և նվազեցնել այն խոչընդոտները, որոնք սահմանափակում են երիտասարդների ընտրված լինելու հավանականությունը: Այս նպատակներին հասնելու համար 2007 թվականին Ազգային ժողովրդավարության ինստիտուտը ստեղծեց երիտասարդական կազմակերպություններից և շարժումների ներկայացուցիչներից բաղկացած Երիտասարդական Համակարգող Խորհուրդ, որը մշտապես կազմակերպում է քննարկումներ, դասընթացներ երիտասարդների համար՝ արդյունավետ հանրային լոբբինգ իրականացնելու, ցանցեր կառուցելու նպատակով: Խորհուրդի կազմում են այնպիսի երիտասարդական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Երիտասարդական Ակումբների Դաշնությունը, “Ալյանս” Քաղաքացիական նախաձեռնությունը, Քաղաքացիական Նախաձեռնությունների ազատ ֆորումը և Քաղաքական Զարգացման Հետազոտական Կենտրոնը: Խորհուրդի հիմնական նպատակներն են՝ խրախուսել երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը, տեղեկացնել երիտասարդներին իրենց իրավունքների մասին, շահերի պաշտպանություն իրականացնել երիտասարդությանն առնչվող հարցերի շուրջ, խրախուսել երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեությունը ֆորումների, կլոր սեղանների և քննարկումների, կարողությունների զարգացման և շահերի պաշտպանության միջոցով:

Երիտասարդական գործողությունների կենտրոններ

Երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը խրախուսելու և վերջիններիս մասնակցությունը երիտասարդական քաղաքականության ձևավորմանը ապահովելու նպատակով 2006 թվականին ՀՀ Սպորտի և Երիտասարդության նախարարությանն ախաձեռնությամբ ստեղծված Երիտասարդական գործողությունների կենտրոնները բավականաչափ ակտիվորեն կազմակերպել են բազմազան քննարկումներ, նախաձեռնել են երիտասարդական փառատոններ, աջակցել են “Բազե” ճամբարի կազմակերպման և իրականացման հարցում: Այս կոնտրոնների հիմնադրման հիմնական նպատակն է հանդիսացել աջակցել նախարարությանը երիտասարդական քաղաքականության մշակման հարցում, հիմնականում երիտասարդների մասնակցությունը այս գործընթացում ապահովելու միջոցով: Ներկա ժամանակահատվածում կենտրոնների գործունեությունը դադարեցված է:

Երիտասարդական Խորհրդարան

2004 թ-ի փետրվարին ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի աջակցությամբ ձևավորվեց Երիտասարդական խորհրդարանը, որը մեկ այլ մեխանիզմ է երիտասարդների համար քաղաքական կուսակցությունների և կառավարական կառույցների հետ աշխատելու պլատֆորմ ստեղծելու ուղղությամբ: Կառույցը ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում երիտասարդության վերաբերյալ օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ հանձնաժողովին եզրակացություն տալու, երիտասարդությանը վերաբերող հիմնահարցերի քննարկմանը երիտասարդների ակտիվ մասնակցությունն ապահովելու, երիտասարդ լիդերներ պատրաստելու նպատակով: ԵԽ-ն փորձում է նպաստել ժողովրդավարական ինստիտուտների կատարելագործմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, երիտասարդներին մասնակից դարձնել օրինաստեղծ աշխատանքներին, օգնել երիտասարդ լիդերների ձևավորմանը, բարձրացնել նրանց իրավագիտակցությունը¹⁰:

Մարզպետարաններին կից մարզային գենդերային հարցերով զբաղվող խորհուրդներ

Բավականաչափ մեծ ջանքեր և ռեսուրսներ են ներդրվում նաև կանանց մասնակցությունը ապահովելու և քաղաքականության մշակման գործընթացներում նրանց մասնակցությունը

¹⁰<http://www.youthparliament.am/?ip=1&lan=arm>

խրախուսելու ուղղությամբ: Այսպես օրինակ, 2011թ բոլոր մարզպետարաններին կից ստեղծվել են մարզային գենդերային հարցերով զբաղվող խորհուրդներ, որտեղ ներգրավված են և կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Մարզային գենդերային խորհուրդների նպատակն է վերհանել այդ ոլորտում մարզային հիմնախնդիրները և իրականացնել վերջիններիս լուծմանն ուղղված միջոցառումներ: Լոռու և Իջևանի գենդերային հանձնաժողովները արդեն մշակել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են ներկայացրել 2012թ գործողությունների պլանը:

“Կին առաջնորդ” ֆորում

“Կին առաջնորդ” ֆորումը հիմնվել է 2006թ-ին Ազգային ժողովրդավարության ինստիտուտի կողմից: Այն, համատեղելով քաղաքական կուսակցություններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվության միջոցներում, տեղական ինքնակառավարման մարմիններում և իշխանության տարբեր ճյուղերում ներկայացված կանանց հարուստ ներուժը, նպատակ ունի ձևավորել կանանց լիարժեք ինքնադրսևորումը ապահովող անկողմնակալ հանրային միջավայր, ապահովել հասարակության տարբեր հատվածների միջև փորձի փոխանակումն ու կամուրջների ստեղծումը, նպաստել ՀՀ քաղաքական և կառավարման համակարգում կանանց ներգրավվածության աստիճանի բարձացմանը, աջակցել կանանց առջև ծառայած խնդիրների համալիր լուծմանը, հաղթահարել ՀՀ – ում կանանց առաջընթացի հիմնական խոչընդոտները, միավորել տարբեր ոլորտներ ներկայացնող կանանց: Խորհուրդը իր աշխատանքները իրականացնում է նիստերի միջոցով և գործում է հասարակական հիմունքներով: Ֆորումի նախաձեռնություններից մեկն է հանդիսացել մարզերում տարբեր հարցերի շուրջ քննարկումների կազմակերպումը, որոնց մասնակցության շնորհիվ կանայնք համայնքներում հնարավորություն են ունեցել սեփական ձայնը լսելի դարձնել քաղաքական և քաղաքացիական ասպարեզում հաջողության հասած կանանց առջև, ինչպես նաև առաջ քաշել մարզերի կանանց համար առանձնահատուկ ուշադրություն պահանջող հարցեր:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ քաղաքացիական նախաձեռնություններում ներգրավվելու տարբեր հնարավորություններ են ստեղծվել մարզերում բնակվող երիտասարդների և կանանց համար, որոնք զարգացրել են այդ խմբերի կարողությունները քաղաքականության մշակմանը մասնակցելու կամ ազդեցություն գործելու համար: Այն, որ հասարակական կազմակերպություններում ներգրավված կանայք բավականաչափ ակտիվ են և արդյունավետ տարբեր շահերի պաշտպանության քարոզարշավներ պլանավորելու և իրականացնելու, հետևաբար նաև որոշումներ կայացնողների վրա ազդեցություն ունենալու հարցերում, վկայում են բոլորովին վերջերս արձանագրված մի քանի փաստեր, որոնց թվում է ՀՀ Կառավարության ժամանակավոր անգործունակության նպաստների տրամադրման որոշման դեմ բողոքները և բազմաթիվ կազմակերպված ակցիաները, կանանց դեմ բռնության,

ինչպես նաև բանակում սպանությունների դեպքերի շուրջ ձևավորված կոալիցիաները և ցանցերի ակտիվացումը: Այս գործընթացներում, ի դեպ, ակտիվորեն հանդես են գալիս նաև մարզերում գործող քաղաքացիական հասարակության կին ներկայացուցիչները:

Երիտասարդական նախաձեռնությունների հաջողության վկա կարող է հանդիսանալ Իջևան քաղաքի երիտասարդական քաղաքականության մշակմանն ու հաստատմանն ուղղված քարոզարշավի հաջողված լքր, Երիտասարդական և Համայնքային ակումբների երիտասարդ

Որոշումների կայացմանը և քաղաքականությունների մշակմանը կանանց երիտասարդներին մասնակցությանը նկատմամբ

անդամների կողմից իրականացված միջոցառումները, որոնց ֆինանսավորման համար վերջիններս արդյունավետ համագործակցել են ՏԻՄ-երի հետ:

ԿԱՆԱՆՑՆԵՐԻ ՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆ ԱԿՑՈՒԹՅՈՒՆՆՈՒՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ:

Կանանց դերի կարևորում

Էքսպերտային հարցմանը մասնակից կին և տղամարդ պաշտոնատար անձինք որևիցե կերպ չեն դիտարկում տղամարդկանց առավելությունը կնոջ նկատմամբ քաղաքականության ձևավորման կամ որոշումների կայացման մեջ ընդգրկվելու տեսանկյունից: Ավելին, կանանց մասնակցության հարցը քաղաքականության ձևավորման գործընթացներում ընդհանուր առմամբ և քաղաքական գործընթացներում մասնավորապես, չի տեղավորվում մտղամարդկանց հետ մրցակցության դաշտ, այլ բացատրվում է կանանց ավելի պասիվ դիրքորոշմամբ, նվազ հետաքրքրվածությամբ քաղաքականության և քաղաքացիական ակտիվության հարցերով, միևնույն ժամանակ շեշտադրելով, որ երկու սեռերի ներկայացուցիչներն էլ ընդհանուր առմամբ շատ պասիվ են:

Այս դրույթը համընկնում է նաև այլ կառույցների կողմից իրականացված հետազոտության արդյունքների հետ, որի համաձայն հասարակական-քաղաքական իրադարձություններով ու գործընթացներով հետաքրքրվածության ընդհանուր ցուցանիշը կազմում է 49.9%: Ընդ որում

տարիքային ցենզի աճին զուգընթաց հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվողների թիվն աճում է՝ 61 և ավելի տարեկանների մոտ կազմում է 58.5%:¹¹

Երկու սեռերի ներկայացուցիչներն էլ գտնում են, որ թե կինը, և թե տղամարդը ոչ միայն ունեն հավասար հնարավորություններ մասնակցելու քաղաքականության կերտման գործընթացին, այլև ունեն դրա համար հավասար պայմաններ: Խոսքը գնում է միայն կանանց կողմից պարտականությունները ճիշտ բաշխելու մասին: Եթե տղամարդիկ կարիք չունեն կենտրոնանալու այլ պարտականությունների վրա, որոնք այսպես թե այնպես ճանաչված են իբրև հատկապես կանանց պարտականություն՝ երեխաների դաստիարակություն, տան հետ կապված հարցեր և այլն, ապա կանայք միանշանակ ընտանիքի համար հոգատարությունը հիմնականում առաջնային են համարում: Հարցվող տղամարդկանցից մեկը նշեց.

“Եթե 100% սանդղակով նայենք, ապա մոտ 30% ներգրավվածությունը պետք է լինի աշխատանքում, կամ որոշումների կայացման ոլորտում, իսկ մնացածը կինը ընտանիքում պետք է ներգրավված լինի”:

Կրկին, եթե անդրադառնանք այլ հետազոտությունների արդյունքներին, ապա վերը նշված դրույթը կհիմնավորվի նաև քանակական տվյալներով: Այսպես, օրինակ՝ քաղաքական և քաղաքացիական ակտիվությանը խոչընդոտող գործոններն ըստ կարևորության հետևյալն են՝ ընտանեկան հոգսերով զբաղվածությունը կանաց մոտ 34.7%, տղամարդկանց մոտ 20,5%: Կենցաղային խնդիրներով զբաղվածությունը կանանց մոտ 24.7%, տղամարդկանց մոտ 14.4%:¹²

Պատկերը փոքր ինչ այլ է ֆոկուս խմբերում միևնույն հարցի պատասխանը քննարկելիս: Տղամարդկանց հետ անցկացված ֆոկուս խմբի մասնակիցները տարակարծիք էին կանանց որպես քաղաքական որոշումների կայացման, տնտեսական և սոցիալական գործընթացներին մասնակցության ակտիվ դերակատարներ հանդես գալու հարցում: Նրանց մի մասը գտնում է, որ կանանց դերը մեծապես ընտանիքի մայր լինելն է, ընտանեկան օջախը ջերմացնելը և երեխաներին դաստիարակելը: Մասնակիցներից մեկը, սեփական կարծիքը հիմնավորելու համար նշեց.

¹¹“Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” զեկույց, Երևան 2011, էջ 5

¹² “Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” զեկույց, Երևան 2011, էջ 15

“Եթե նայենք Եվրոպական երկրներին, ապա կնկատենք, որ նրանք ծերացող ազգեր են, քանի որ նրանց կանանց ներգրավվածությունը շատ է քաղաքական ոլորտում, ինչը խոչընդոտում է ազգի վերարտադրությանը: Իսկ մեր մոտ կինը պետք է լինի տան կին, ընտանիքի մայր, ոչ թե ներգրավված լինի քաղաքական դաշտում”:

Մինչդեռ մասնակիցների մյուս խումբը հակված է մտածելու, որ երկու սեռերի դեպքում էլ կարևորագույն գործոններ պետք է հաղիսանան տվյալ անձի որակական հատկանիշները՝ կրթությունը, քաղաքականության մշակման և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ որակների և հմտությունների առկայությունը, հետաքրքրվածությունը և հասարակական գործունեության փորձը, այլ ոչ թե սեռական պատկանելությունը: Նմանատիպ պատասխաններ են արձանագրվել նաև կանանց ֆոկուս խմբի մասնակիցների կողմից:

Տղամարդկանց ֆոկուս խմբում հնչեց նաև այն կարծիքը, որ այսպես, թե այնպես, կանայք են որոշում կայացնում՝ անկախ ֆորմալ պաշտոնի առկայությունից, իսկ ներկայիս գործազրկության պայմաններում կարելի է պաշտոնները թողնել տղամարդուն.

“Անկախ ամեն ինչից կինը գտնվում է կենտրոնում, քանի որ միշտ տղամարդիկ կանանց կարծիքը հարցնում են որոշումներ կայացնելիս: Եվ կարևոր չէ, թե արդյոք կինը նստած է պաշտոնյայի աթոռին թե տանն է:”

Հատկանշական է, որ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ ընդգրկվածությունը որոշումների կայացման գործընթացում գրեթե մշտապես քննարկվել է քաղաքական գործունեություն ծավալելու, թեկնածու առաջադրելու կամ պաշտոն ունենալու, դեկավարելու և կառավարելու շեշտադրումներով: Մինչդեռ փորձագիտական հարցումների մասնակիցները մեծամասամբ հարցը դիտարկել են թե քաղաքացիական, և թե քաղաքական ակտիվության տեսանկյունից:

“Մեր հասարակությունը շատ է բնեռացված: Մեզանում քաղաքական ակտիվությունը հասկանում են՝ կուսակցություն, բայց իմ համար կարող է լինել նաև Գ-ն, որը հասարակական կազմակերպության դեկավար է, անտարբեր չէ տիրող իրավիճակին և քաղքացիական ակտիվություն է դրսևորում անհրաժեշտության պահին: Որպես քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող կին, ես հասկանում եմ՝ ակտիվ կին: Կարող է այդ կինը աշխատել նաև մարզպետ”:

Այն հարցին, թե արդյոք կանայք կարող են միաժամանակ ակտիվ լինել քաղաքական, սոցիալական ոլորտում և լիարժեք կատարել ընտանիքի կնոջ դերը, արական սեռի մասնակիցները հակված են կարծելու, որ կինը պետք է իր ժամանակի և կարողությունների մեծ մասը ներդնի ընտանեկան պարտականությունները լավագույնս կատարելու ուղղությամբ, քանզի մեկը կատարվում է ի հաշիվ մյուսի: Այսպիսին է պատկերը նաև այլ հարցումների արդյունքներում. պնդմանը, որ քաղաքականությամբ զբաղվող կանանց

անձնական կյանքում “ինչ որ բան այն չէ” դրական են պատասխանել հարցված կանանց 39% և տղամարդկանց 48%: ¹³

Այլ է որոշումների կայացման ոլորտում ընդգրկված կանանց համոզմունքը այս հարցում: Վերջիններս գտնում են, որ կնոջ ընտանեկան և սոցիալական դերերը միանգամայն համատեղելի են և ոչ մի պարագայում մեկը չի իրականացվում ի հաշիվ մյուսի:

“Որքան շատ ես զբաղված, այնքան ավելի կազմակերպված ես: Հավատացե՛ք, ամեն ինչ հնարավոր է համատեղել, եթե ցանկություն կա:”

Այսպիսով՝ ակնհայտ է, որ թե կանայք, և թե տղամարդիկ չեն բացառում կանանց ընդգրկումը որոշումների կայացման գործընթացներում՝ լինի դա քաղաքական, կամ էլ քաղաքացիական դաշտում տարբեր դերակատարումներ ունենալու միջոցով: Միննույն ժամանակ, կնոջ որպես քաղաքականություն կերտող դերակատարի վերաբերյալ տղամարդկանց ընկալումները խիստ պայմանավորվածությանմեջ են դրվում կնոջ ընտանիքում ունեցած դերակատարության հետ:

Միայն տղամարդկանց շատ ստվար զանգվածն է կիսում այն կարծիքը, որ կինը կարող է նույն հաջողությամբ համադրել ընտանիքում ունեցած իր սոցիալական դերը քաղաքական կամ քաղաքացիական ակտիվ դերակատարության հետ: Այս հանգամանքը մտածելու տեղիք է տալիս, քանզի բացահայտում է իրավիճակը փոխելու հնարավորություն՝ տղամարդկանց դերը ընտանիքում ընդլայնելու և կանանց ժամանակն ու ռեսուրսները վերաբաշխելու տեսանկյունից:

Երիտասարդների կարևորում

Երիտասարդների ներգրավումը քաղաքականությունների մշակման կամ որոշումների կայացման գործընթացներին առավելապես կարևորվում է երիտասարդների և երիտասարդական հիմնահարցերով զբաղող հասարակական կազմակերպությունների կողմից, քանզի վերջիններիս մտածելակերպը դիտարկվում է որպես ավելի առաջադեմ, կարծրատիպերից ազատ և ներկայիս կարիքների ու զարգացումների նկատմամբ առավել զգայուն:

Հարցազրույցների ժամանակ ձևավորված առանցքային կարծիքն այն էր, որ մեր հասարակությունում երիտասարդների ներգրավումը որոշումների կայացմանը պետք է լինի

¹³ “Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության զենդերային առանձնահատկությունները” զեկույց, Երևան 2011, էջ 34

քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով միայն, որ վերջիններս չպետք է ներգրավվեն կառավարություն և զբաղեցնեն պաշտոններ, այլապես ստիպված են լինել հարմարվող, անարդարությունները հանդուրժող:

“Առողջ երիտասարդները պետք է ընդդիմությունում լինեն: Նրանք չպետք է ընդգրկվեն որոշումների կայացման ոլորտներ, որպեսզի չքծնեն, չհարմարվեն, դա ճիշտ չէ: Նրանք պետք է լինեն ընդդիմություն և ազդեն որոշումների կայացման վրա այդ ճանապարհով: Այդ ուղիով դառնալ ճանաչված և նոր ընդգրկվել կառավարություն՝ իրենց դիրքորոշումով և դեմքով: Ցավոք ՀՀ –ում ամեն ինչ արվում է մեր երիտասարդությունը փչացնելու համար:”

Երիտասարդների որոշումների կայացման ոլորտում ֆորմալ ներգրավված անարդյունավետ մեխանիզմներ չկարողացավ առաջարկել հարցվածների ցուցմեկը:

Նույնիսկ հարցված փորձագետ երիտասարդները, որոնք որոշումների կայացման ոլորտում արդեն իսկ ունեն հստակ դերակատարում, նշել են, որ բավականին դժվար է փոփոխություններ անել, քանզի իրենց հանդեպ միշտ էլ առկա է “դու երիտասարդ լինելով հանդերձ, փորձ չես կարողուն անալ” վերաբերմունքը:

“Երիտասարդը պետք է մի քանի անգամ ավելի լավ ուսումնասիրի խնդիրը, քանի որ իր սխալվելը չի ներվի ու կկապվի երիտասարդ լինելու հետ: Երիտասարդների գործն ավելի դժվար է, քան կանանցը:”

“Մեր հասարակությունում կա մի մոտեցում. վստահության պակաս, որ եթե մի հարց է լինում ասում են, դու երիտասարդ ես՝ լավ չես հասկանում: Այդ սկզբունքը պետք է փոխվի, քանի որ պետք է հասկանան, որ կապ չունինա երիտասարդ է, թե՛ մեծ, պետք է գնահատեն նրա խելքը, ցանկությունը, ունակությունները: Կարևորը ցանկությունն է, եթե երիտասարդները ուզում են մարզում ինչ-որ բան փոխել, պետք է նրանց թույլ տալ: Կարևորը լինեն սկզբունքային և ունենան կամքի ուժ:”

“Պայքարի եզակի դեպքեր կան: Այսօր երիտասարդները կառավարման համակարգում տեղ են զբաղեցնում ըստ քծնանքի աստիճանի և, եթե նա արդարության կողմնակից է, ապա թողնում և հեռանում է երկրից, քանի որ չի գնահատվում:”

“Մինչև մեր պետությունը չփոխվի, ոչ կինը, ոչ էլ երիտասարդները դեր չեն ունենա:”

Ինչ վերաբերում է քաղաքացիական ակտիվության դրսևորման և նախաձեռնությունների իրականացման միջոցով տեղական մակարդակում քաղաքականությունների մշակման գործընթացին մասնակցելուն, ապա վերջինս դիտարկվում է որպես առավել “առողջ”, բայց մինևույն ժամանակ բավականին անմատչելի և “վտանգավոր” մոտեցում, քանզի վտանգում է ընտանիքի բարեկեցությունը:

“Այսօր երիտասարդները վախենում և խուսափում են մասնակցել քաղաքականությանը և որոշումների կայացմանը, քանի որ իրենց ընտանիքը սոված կմնա: Պետք է խելոք, գլուխը կախ աշխատի և հարմարվի: Ով կարող է իր հայացքները հակադրել իր ընտանիքի սոված ջմնալուն:”

Ինչպես նշեց տղամարդկանց ֆոկուս խմբի մասնակիցներից մեկը. մեր երկրում երիտասարդը չի ունենում այն ժամանակահատվածը /միջակայքը, երբ կարող է ազատ և անկաշկանդ այս կամ այն ազդեցություններից զերծ գործել, ձևավորել սեփական մտածելակերպ, հայացքներ և նոր կրել ընտանեկան հոգսը, քանի որ անմիջապես կրթական գործընթացը ավարտելուց հետո մեր իրականությունում “հարկադրված ես” պատասխանատվություն կրել քո ընտանիքի բարեկեցության համար:

Հիմնական գաղափարը, որը երիտասարդները հնչեցրել են որպես իրենց ներգրավման անհրաժեշտություն, այն է, որ մասնակցելով որոշումների կայացմանը իրենք կարող են առաջ մղել հենց իրենց՝ երիտասարդներին անհրաժեշտ ու երիտասարդների համար կարևորություն ունեցող հարցերը: Միևնույն ժամանակ իրենք համոզված են, որ երիտասարդներն են փոփոխությունների շարժիչ ուժը, և այսպես կոչված “սովետական” մտածելակերպից ազատ լինելը իրենց առջև լայն հորիզոններ է բացում այդ ասպարեզում: “Երիտասարդական” համատարած էնտուզիազմը փոքր ինչ մոայլեցրեց մեկ այլ երիտասարդի ասածը, որն, ի դեպ, հանդիսանում է գործող ավագանու անդամ.

“Ցավում եմ, բայց շատը հիասթափությամբ են ավարտվել իմ բոլոր ջանքերը երիտասարդներին ակտիվացնելու, ոչ մի փոփոխություն չեմ զգացել”:

Երիտասարդների հանդեպ՝ որպես փոփոխություններ առաջնորդելու ուժ հանդիսացող հասարակության անդամների, այլ մոտեցում են ցուցաբերել կանանց ֆոկուս խմբի ներկայացուցիչները: Նրանք վերապահումով են մոտենում երիտասարդների կողմից հնարավոր ներդրումներին, և նման վերաբերմունքը հիմնավորում են վերջիններիս անվստահությամբ սեփական ուժերի հանդեպ և փորձի պակասով: Սակայն համաձայն նույն խմբում հնչեցված կարծիքների, “*հասարակությունը տարբեր շերտերից է կազմված, և բոլոր*

Ազդեցությունը որոշումների կայացման վրա կանանց ներկայացուցիչներին և նրանց ակտիվացնելու պարագայում

շերտերի ներկայացվածությունը որոշումների կայացման, քաղաքականությունների մշակման, համայնքային բյուջեկազմելու գործընթացներում ներդաշնակություն և համաշափություն կապահովի”:

Այսպիսով՝ երիտասարդները մեծամասամբ ընկալվում են որպես հասարակության “անփորձ” անդամներ:

Ձևավորված վերաբերմունքը երկուստեք ազդեցություն է ունենում. մի կողմից երիտասարդները պասիվանում են, մյուս կողմից երիտասարդների կողմից առաջ քաշվող նախաձեռնությունները հաշվի չեն առնվում: Երկու դեպքերում էլ երիտասարդները չեն ունենում լայն հնարավորություններ փորձարկելու և զարգացնելու որոշումների կայացմանը մասնակցելու և որոշում կայացնողների վրա ազդեցություն գործադրելու հատկություններ ու

կարողությունները՝ սահմանափակվելով տարբեր կառույցների կողմից առաջնորդվող և իրականացվող ծրագրերում ընդգրկվելով:

Կանանց մասնակցություն

Բոլոր հարցված փորձագետները նշել են, որ կնոջ մասնակցությունը տղամարդուն բնորոշ աշխարհում՝ որոշումների կայացման գործընթացում, կարող է հստակ ազդեցություն ունենալ որոշումների կայացման որակի վրա: Հատկապես այնպիսի հարցերում, ինչպիսիք են սոցիալական ոլորտը, երեխաների և ընտանիքին առնչվող հարցերը, կանայք կարող են իրենց «կանացի» տեսակետը ներկայացնել, մեղմացնել հարցերի քննարկումը և ուշադրությունը գրավել այնպիսի հարցերի լուծմանը, որոնք կարող են դուրս մնալ միայն տղամարդկանցից կազմված խմբի ուշադրությունից: Փորձագետներից մեկը նշեց, որ կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում դարձնում է այն ավելի կառուցողական, նվազ կոնֆլիկտային և առավել բանակցային, թափանցիկ և մասնակցային՝ քաղաքականության մշակման գործընթացում շահագրգիռ տարբեր կողմերի ներգրավմամբ: Համաձայն հարցվածներից մեկի.

“Երբ որ կանայք են ներգրավված կառավարման համակարգում, այս իրավախախտումները ավելի քիչ են, եթե նույնիսկ լինում են նման դեպքեր, այս նորից արվում են տղամարդկանց մտահոգումով, բայց կանանց ձեռքերով: Կանայք ավելի պատասխանատու են և պարտաճանաչ, ուստի աշխատանքը լավ են կատարում”:

Մինևույն ժամանակ, այս հարցի պատասխանը շատ ընդգծված քանակական բաղադրիչ ունի: Կին և տղամարդ փորձագետները առաջին տեղում են դրել կանանց մտավոր կապիտալը ներգրավելու կարևորությունը՝ հետևյալ հիմնավորումներով.

“62%բնակչության բարձրագույն կրթություն ունեցողը կանայք են, այսինքն մտավոր ներուժը քանակ է կազմում, որը մենք ռացիոնալ չենք օգտագործում: Կնոջը չներգրավելով՝ պետությունը չի օգտագործում իր մտավոր ռեսուրսի 2/3-ը”:

Մյուս կարծիքները այս հարցի վերաբերյալ, արտահայտված թե տղամարդկանց, և թե կանանց կողմից, թերևս լիովին ներառում է ստորև ներկայացվող մեջբերումը.

“Որպես դիմացկուն, դժվարություններին դիմակայելու ընդունակ էակ, կինը պետությանը կտա ավելի տրամաբանված, հավասարակշռված, սրտից բխող որոշումների առաջարկներ, աշխատանքը կդարձնի առավել կազմակերպված, համակարգված և արդյունավետ:”

Այն հարցին, թե ինչպիսի հատկանիշներ են բնորոշ որոշումների ոլորտում ընդգրկված կանանց և երիտասարդներին, հարցվածների հիմնական մասը նշել է, որ չէր ցանկանա տարանջատել հատուկ հատկանիշներ ոչ կանանց, ոչ երիտասարդների, ոչ էլ այդ ոլորտում ընգրկված այլ խմբերի ներկայացուցիչների համար: Որոշումների կայացման ոլորտում

**Քաղաքականության մշակման
ընթացումների կայացմանը
ընդկրկված կանանց ներդրումը
աղաների ներդրումը հասկանալի
ներ**

ընդգրկված բոլոր դերակատարները պետք է լինեն կիրթ, խելացի, տեղեկացված, արդարամիտ: Ստորև ներկայացված մեջբերումը, թերևս, մտածմունքների տեղիք է տալիս, քանզի մի կողմից, չի տարանջատում ակտիվ կին և տղամարդ դերակատարներին հասկանալիների տեսանկյունից, մյուս կողմից էլ խորհուրդ է տալիս ակտիվ կնոջը ի ցույց չդնել իր սոցիալական դերակատարման ոլորտում գտնվող

խնդիրները.

“Ըստ էության, չպետք է տարբերվի քաղաքական գործունեությամբ զբաղվող տղամարդը՝ կնոջից: Նրանք պետք է նույն հատկանիշները ունենան: Կանայք պետք է հաշվի առնեն հասարակության պահանջները: Օրինակ, այդ գործունեությամբ զբաղվող կինը չպետք է ցույց տա, որ ընտանիքի հոգս ունի, քանի որ այսօր հասարակությունը դա դիտում է որպես քաղաքականությամբ զբաղվելու համար խանգարող հանգամանք: Կինը պետք է հանրությանը ներկայանա ըստ ընդունված պահանջարկի, մինչև որ հասարակության մեջ այդ կարծրատիպը վերանա”:

Չտարբերակելով որոշումների կայացմանը ընդգրկված կանաց և տղամարդկանց հատկանիշները ընդհանուր առմամբ, որոշ լրացուցիչ հատկանիշներ, այնուամենայնիվ, առանձնացվել են: Դրանց շարքում են տոկունությունը, խիզախությունը և հավելյալ ջանք ներդնելու պատրաստակամությունը, քանի որ.

“Այդ միջավայրը իր համար բնական միջավայր չէ գործելու համար և հարմարվելու համար պետք է ավելի ուժեղ լինես: Կնոջից պահանջվում են լրացուցիչ ջանքեր”:

Ստորև ներկայացվում են որոշումների կայացման ոլորտում կանանց բնութագրող/անհրաժեշտ հատկանիշները ըստ ռեսպոնդենտների.

ԿԻՆ

ստեղծագործականություն, տոկունություն և լավատեսություն
բանիմացություն, կայացած և զիտակլիներմասնագիտական ոլորտում
միջանձնային հարաբերությունների կառուցման մեջ արդյունավետություն
մարդկային և նյութական ռեսուրսների արդյունավետ կառավարում
արժանապատվության բարձր զգացում
անհամակերպվողականություն, քաղաքական ճկունություն
խստություն, զսպվածություն և քիչ հուզականություն
հոե տորություն, հաստատուն խոսք/ինքնավստահություն, ունկնդրին պահելու կարողություն
համոզելու կարողություն
աշխատելու ցանկություն
նախաձեռնողականություն և ակտիվություն
վճռականություն, համարձակություն, ազնվություն
ներբանկատություն
պարտաճանաչություն, լիդերություն, նպատակասլացություն

Այսպիսով, երկու սեռերի ներկայացուցիչները գտնում են, որ կանանց ներգրավվածությունը թույլ կտա հարցին մոտենալ տարբեր կողմերից, հնարավորություն կտա տեսնել և նկատել այն, ինչը, միգուցե, կարող է վրիպել միայն տղամարդկանցից կազմված խմբերում: Մինևույն ժամանակ երկու սեռերի ներկայացուցիչները համաձայնել են այն հարցի շուրջ, որ կանայք ավելի կազմակերպված են, պարտաճանաչ, պատասխանատվության բարձր զգացումով: Մրանք են այն հատկանիշները, որոնք “մշակույթ և կառավարման մոտեցումներ են փոխում, կայունություն են ապահովում քաղաքական դաշտում, երիտասարդների համար դրական օրինակ են ծառայում”:

Երիտասարդներին բնորոշ չափանիշներ

Ինչ վերաբերում է **երտասարդներին**, ապա հատուկ հատկանիշների շարքում հիմնականում նշվում էր.

- տեղեկացվածությունը երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքին,
- սկզբունքայնությունը, կամքի ու ժրհանդուրժողականությունը, որը կապահովեր նրանց լիարժեք արդյունավետ մասնակցությունը քաղաքականությունն երիմշակման և կառավարման գործընթացներում:

- Որպես կարևոր հատկանիշերի տասարդների համար առանձնացվում են անաշխատանքալի և փորձնուարդարության համար պայքարելու ցանկությունը:
- Մտորեն երկայացվում են որոշումների կայացման ոլորտում երիտասարդների բնութագրող/անհրաժեշտ հատկանիշները.

ԵՐԻՏԱՍԱՐԴ

*անարդարության դեմ պայքարելու ցանկության և փոփոխություն առաջացնելու ձգտումով,
կրթվածություն, ինքնուրույնություն, ինքնագնահատում,
հետաքրքրվածություն երկրի անցուդարձով, տեղեկացվածություն
վերլուծելու կարողություն,
տարբեր տեսակի տեղեկատվական հոսանքների ցկարկորը տարանջատելու կարողություն,
Կրեատիվություն/ նորարարություն*

Այն հարցին, թե արդյոք երիտասարդները իրենց տեսնում են որոշումների կայացման ոլորտում ներգրավված, հարցման մասնակից երիտասարդների կարծիքները բավականին տարատեսակ են: Այսպես, օրինակ, եթե հարցման մասնակից արական սեռի ներկայացուցիչները հաստատակամ են տեղական մակարդակում որոշումների կայացման հարցում երիտասարդների մասնակցության վերաբերյալ, ապա իգական սեռի ներկայացուցիչները խիստ տարբեր են: Իգական սեռի երիտասարդներից ոմանք գտնում են, որ դեռևս չեն տեսնում իրենց ներգրավված, մյուսները՝ առհասարակ չեն տեսնում սեփական ներգրավվածության հնարավորությունը և ձևը որոշումների կայացմանը: Երիտասարդ կանանցից ընդամենը մեկն է, ով ոչ միայն տեսնում է իր մասնակցությունը, այլև ունի համապատասխան փորձառություն:

Կանանց երիտասարդներին կալումը քաղաքականության մանրամասնակցելու սեփական մասնակցության վերաբերյալ

“Ես համայնքապետարանի հետ խաղաղապարակի կառուցման ծրագիր եմ իրականացրել: Այն արժանացել է հավանության և World Vision կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվել է: Ցանկություն եմ ունեցել դնել ավագանու թեկնածություն նախորդ ընտրությունների ժամանակ, սակայն ծանոթներիցս մեկը նույնպես դրեց իր թեկնածությունը, և ես հրաժարվեցի այդ մտքից”:

Երիտասարդ կանանցից մեկը նշել է նաև, որ իրեն հաջողվել է իրականացված սեմինարների արդյունքում արձանագրել մասնակիցների մտածելակերպի փոփոխություն, ինչը նրա մեջ վստահություն է առաջացրել և համոզել, որ ճիշտ ռազմավարություն ընտրելու դեպքում հնարավոր է որոշումների կայացման ոլորտում ևս հաջողության հասնել: Այս կարծիքը թերևս համընկնում

Է մեկ այլ երիտասարդի կողմից արտահայտած կարծիքին այն մասին, որ ցանկություն և բավարար որակներ ունենալու դեպքում երիտասարդները կարող են դառնալ որոշումների կայացման լիարժեք դերակատար:

Կարևոր է նշել, որ այս հարցին պատասխանելիս հարցվողները հակված էին դիտարկել հիմնականում ընտրությունների մասնակցության կամ բարձր պաշտոն ունենալու հանգամանքները՝ որպես որոշումների կայացմանը ներգրավված լինելու ձև:

Հարցման մասնակից բոլոր փոձագետները, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումների կին և տղամարդ մասնակիցները միանշանակ տեսնում են կանանց ներգրավվածությունը տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում: Հատկանշական է, որ անգամ այն կանայք, որոնք ունեն ավագանու ընտրություններին մասնակցելու բացասական փորձ¹⁴, շարունակում են իրենք իրենց տեսնել որոշումների կայացման ոլորտում ներգրավված դերակատարներ:

“...եթե մնայի համայնքում, կրկին կփորձեի” – ավագանու թեկնածուության փորձառությամբ կին, որը Երևան է տեղափոխվել:

**Կանանց երիտասարդներին
մասնակցությունը խոչընդոտող
և/
կամխթանող հանգամանքներ**

Նույնատիպ վերաբերմունք են դրսևորել նաև ընտրություններում որևիցե փորձառություն չունեցող կանայք: Սակայն, համաձայն հարցման մասնակիցների, քաղաքական ասպարեզում “ազդեցիկ քաղաքական գործիչ” դառնալու ճանապարհին հանդիպող բարդությունները ոչ միշտ է, որ առնչվում են թեկնածուի սեռական պատկանելության կամ անձնական որակների հետ:

“Այո, ես կարող եմ լինել լավ քաղաքացու: Ոչ միայն ես, այլև շատերը, ովքեր կարող են շատ բան տալ քաղաքին չեն կարողանում հասնել այնտեղ: Մինչ այդ կան շատ մեխանիզմներ և ցավոք դրանք չեն թողնում այնտեղ հասնել այն մարդկանց, ովքեր արժանի են: Այդ մեխանիզմները անարդար են, անօրինական”, - ասեց կանանցից մեկը:

Այն հարցին, թե արդյոք պատկերացնում են իրենց հարազատ մեկի, այն է՝ ընտանիքի անդամներից մեկի որպես որոշումների կայացման գործընթացում ակտիվորեն ներգրավված կին, բոլոր տղամարդիկ միանշանակ պատասխանել են դրական, միևնույն ժամանակ

¹⁴ Կանանցից երեքը պարտվել են ավագանու նախորդ ՏԻՄ ընտրությունների ընթացքում, իսկ մեկը՝ ներկայումս ավագանու անդամ է:

կապելով վերջիններիս ներգրավվածությունը կնոջ գիտելիքների, հմտությունների և ցանկությունների հետ: Սակայն այստեղ է, որ խիստ տարանջատվում են քաղաքական և քաղաքացիական ոլորտներում ներգրավված լինելու հնարավորությունները: Տղամարդկանց մեծ մասը ոչ միայն տեսնում է, այլև խրախուսում է իգական սեռի ներկայացուցիչների ակտիվությունը որոշումների կայացման հարցում, եթե վերջինս քաղաքականության հետ կապ չունեցող երևույթ է: Այստեղ կարևոր է նշել, որ հիմնական պատճառը քաղաքականության հանդեպ իրենց իսկ բացասական վերաբերմունքն է, այլ ոչ թե կնոջը քաղաքականությամբ զբաղվելուց հետ պահելու միտումը:

“Քաղաքականության մեջ չէի ուզի տեսնել կնոջս, քանի որ այսօր այդ ոլորտում տիրում է ցինիզմը: Երբ որ կմաքրվի այդ ոլորտը, նոր ցանկություն կլինի, որ մեր կանայք մասնակցեն այդ ոլորտում: Բայց միևնույն ժամանակ, եթե այդ ոլորտում շատ կանայք լինեն, տղամարդիկ իրենց զուսպ կպահեն”:

Օրենսդրական դաշտ

Այն հարցին, թե արդյոք Հայաստանում կան կնոջ և երիտասարդների ներգրավվածության աստիճանը սահմանափակող օրենսդրական խոչընդոտներ, նշվել է, որ օրենսդրական դաշտը լիովին բարենպաստ է վերը ներկայացված երկու խմբերի ներգրավվածությունը ապահովելու և խթանելու համար: Էքսպերտներից երկուսը ընտրացուցակներում քվոտաների առկայությունը անգամ դիտարկել են որպես կանանց հանդեպ խտրականություն, և առավել ևս՝ արհեստական մեխանիզմ, մինչդեռ՝ նույն քվոտաների առկայությունը կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից խիստ կարևորվում է, քանզի վերջիններս գտնում են, որ հենց այդ “դրական խտրականությունը”, ի վերջո, կապահովի այսպես կոչված “կրիտիկական զանգվածի” առաջացումը:

“Օրենսդրական առումով խնդիր չկա, և սահմանադրությամբ և նրանից բխող օրենքներով կինը ազատ է մասնակցելու որոշումների կայացման գործընթացում: Օրենսդրական խտրականություն մեզ մոտ գոյություն չունի”:

“Չնայած կան քվոտաներ, բայց տղամարդկանց մտածելակերպը չի թողնում, որ կանայք լիարժեք մասնակցեն այդ գործընթացներին: Այդ ամենը շատ ձևական բնույթ է կրում: Ընտրական մշակույթը շատ ցածր մակարդակի վրա է: Քննարկումները շատ անձնական մակարդակի են և կինը այդ առումով ավելի խոցելի է”:

Փորձագետ կին ավագանիներից մեկը, այնուհանդերձ, նշեց, որ “նույնիսկ դրական խտրականությունը՝ խտրականություն է, այն խոչընդոտում է հավասար մասնակցային պայմանների առկայությանը և հետագայում էլ հիմք է հանդիսանում համապատասխան վերաբերմունքի”: Նա նաև շեշտադրեց, թե որքան կարևոր է “որակյալ կանանց” ներկայացվածությունը, քանի որ հակառակ դեպքում ավելի է ամրապնդվում և հիմնավորվում այն պիտակավորումը, որը կինը խելացի չէ և անելիք չունի քաղաքականության մեջ:

“Քաղաքականության մեջ թույլ մտավոր ունակություններով տղամարդիկ շատ կան, սակայն նրանց դիտարկում են որպես բացառություն, իսկ մեկ կնոջ սխալը այդ ոլորտում վերագրվում է ողջ տեսակին: Անթույլատրելի է ոչ ճիշտ թեկնածուն”:

Միննույն ժամանակ, համաձայնելով օրենսդրական դաշտում խոչընդոտների բացակայության փաստի շուրջ, հարցման բոլոր մասնակիցները նշեցին, որ գործնականում, օրենքը միշտ չի կիրառվում և գործում, և հաճախ՝ չարաշահումների տեղիք է տալիս:

“Ամեն ինչ միայն գրված է թղթի վրա և միայն ասում են, սակայն ոչ ոք ոչինչ չի անում”:

“Բոլորս էլ գիտենք, թե ինչպես են կանանց կուսակցություններում ընտրություններից հետո կանչում և ասում, որ պետք է հրաժարվի, որպեսզի հաջորդ տղամարդն անցնի”:

Պետք է սակայն ուշադրություն դարձնել այն կարծիքների վրա, որոնք փաստում են, որ ոչ լեգիտիմ ընտրությունները իրենց բացասական ազդեցությունն են թողնում ընտրությունների մասնակից բոլոր կողմերի վրա, լինի դա կին, թե տղամարդ:

Սոցիալ-տնտեսական գործոն

Սոցիալ-տնտեսական գործոնի հարցում հարցվողները նույնպես տարակարծիք եղան՝ հատկապես կանանց քաղաքականությանը մասնակցելու հարցը դիտարկելու պարագայում: Նրանց մի մասը գտնում է, որ Հայաստանի ներկայիս աշխատաշուկան ավելի բարենպաստ է կանանց և երիտասարդների համար, նրանք ավելի մեծ հավանականություն ունեն աշխատանք գտնելու, հետևաբար՝ ֆինանսապես անկախ լինելու համար: Եվ, քանի որ ֆինանսական միջոցների առկայությունը քաղաքացիական ակտիվության նախապայմաններից մեկն է դիտարկվել գրեթե բոլոր հարցվողների կողմից, ապա այս պարագայում կինը և երիտասարդը ավելի ազատ են ուղղելու իրենց իսկ կողմից վաստակած միջոցները այն նպատակների համար, որոնք իրենք են առաջնային համարում:

Հարցման մասնակիցների մյուս խումբը գտնում է, որ ֆինանսական միջոցները շատ կարևոր են հատկապես ընտրական գործընթացներում մասնակցելու համար, ու հենց քաղաքական ակտիվության հարցում է, որ կարծիքների տարաձայնությունը ավելի ակնառու դարձավ: Այս կարծիքին հակված հարցվողները համարում են, որ տղամարդը քաղաքականության մեջ ներգրավվելիս կարողանում է ավելի շատ ռեսուրսներ ներդնել՝ գումար, ժամանակ, կապերն այլ, քանի որ նա է հիմնական վաստակողը և ավելի քիչ է ներգրավված ընտանիքի առօրյան կազմակերպելու մեջ: Հատկանշական է, որ Ֆինանսական միջոցների սղությունը որպես

քաղաքական և քաղաքացիական ակտիվությանը խոչընդոտող գործոն նշել են նաև այլ հետազոտության ընթացքում հարցված կանանց 24,2%-ը և տղամարդկանց 20,7%ը¹⁵:

Այս կարծիքին հարող հարցվածները թեև գտնում են, որ “դասական” իրականության մեջ սոցիալ – տնտեսական գործոնը չպետք է ազդեցություն ունենա քաղաքականությունների մշակման և կառավարման գործընթացում ներգրավվելու վրա, սակայն մեր երկրում քաղաքականությունն ու տնտեսությունը այնքան են սերտաճած, որ մեկը բխում է մյուսից և տնտեսական ու սոցիալական կարգավիճակը որոշիչ գործոնների են վերածվում:

Եթե վերլուծենք ՏԻՄ ընտրություններում թեկնածություն առաջադրած և չընտրված կանանց հարցազրույցները, ապա կարելի է միանշանակ ասել, որ բոլորն էլ իրենց այդ պահի ֆինանսական “կարողությունը” դիտարկում են որպես ձախողման առաջնային և որոշիչ գործոն: Միևնույն ժամանակ ընտրություններում հաջողությունների հասած ավագանի կինը նշում է, որ իր հարազատները, բացի բարոյական աջակցությունից, զգալի ֆինանսական ներդրումներ են կատարել, ինչը որոշակիորեն ապահովել է մրցակցային դաշտում հաջողության հասնելը:

Հարկ է նշել, որ ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությունը հարցվողների կողմից դիտարկվում էր միայն որպես մյուս թեկնածուների շարքում արժանապատիվ քարոզարշավ վարելու և տեսանելիություն ապահովելու գործոն: Այսպես.

“Նաև ֆինանսական վիճակն է շատ կարևոր, հեռուստահաղորդումները թանկ են, մարդկային ռեսուրս պահելը գումար է, իսկ քարոզարշավը գումար պահանջող է: Գումարի չափի մասին տեղյակ չեմ, քանի որ ես գումար չեմ ծախսել և չգիտեմ: Եթե վստահված անձ չունես ընտրատարածքներում, ապա չես կարող արդարություն պահել և չես էլ կարող պահանջել”:

“Քանի որ կանայք քիչ են ներգրավված բիզնեսում, ուստի նրանք չունեն բավարար գումար ապահովելու իրենց մասնակցությունը”:

“Ինձ համար հիմնական խոչընդոտ է հանդիսացել ֆինանսը և մարդկանց մտածողությունն այն մասին, որ մեկա չունի ֆինանս ընտրվելու համար, ինչի իզուր իմ ձայնը տամ ու կորցնեմ: Թերահավատորեն են վերաբերվում ոչ թե կնոջը, այլ ֆինանսներ չունենալուն”:

Թեկնածություն առաջադրած և չընտրված կանանց հարցազրույցներից ակնհատ էր նաև այն փաստը, որ գրեթե բոլորը շատ արագ և վերջին օրերին են ընտրություններին մասնակցելու որոշում կայացրել:

¹⁵“Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության զենդերային առանձնահատկությունները” զեկույց, Երևան 2011, էջ 15

“Եթե ես նախապես որոշած լինեի, միգուցե փնտրեի նաև հովանավորներ: Բայց ես լրիվ ձայն եմ հավաքել իմ շրջապատի, իմ ուսանողների հաշվին”:

Թերևս եղել են արտաքին գործոններ ազդող այդ որոշումների կայացմանը: Օրինակ՝, թեկնածուները չեն ունեցել քարոզարշավների պլանավորման համար բավարար ժամանակ, առավել ևս ֆոնդհայթայթման պլան և ռազմավարություն, ինչն էլ արդեն իսկ քարոզարշավի սկզբնական փուլում խաթարել է նրանց հաջողության հասնելու հնարավորությունը: Եղել են նաև դեպքեր, երբ թեկնածու կանանց առաջարկել են աջակցություն հետագայում՝ լավությանը՝ լավությամբ պատասխանելու՝ ակնկալիքով:

“Մենք գիտենք, թե մեր ընտրությունները ոնց են անցնում, դրա համար նրանք չեն էլ փորձում դիմել և պայքարել: Օրինակ ԱՄՆ-ում քարոզարշավի գումարները թեկնածուները հավաքում են իրենց բարեկամներից, ընկերներից և ծանոթներից: Իսկ այստեղ ֆինանսավորումը ստանում են մեծահարուստ բիզնեսմեններից, ուստի ընտրվելու դեպքում, նրանց դիմաց պարտավորված են զգում և օրենքները ընդունում են ի օգուտ նրանց: Իսկ ԱՄՆ-ում դա չի լինում, քանի որ գումար տվողները սովորական մարդիկ են եղել”:

Մշակութային գործոն

Մշակութային խոչընդոտը բոլոր հարցվողների կողմից նշվեց իբրև կանանց և երիտասարդների ակտիվությունը և մասնակցությունը սահմանափակող կարևորագույն գործոն: Հատկապես ակնհայտ է կանանց դերի վերաբերյալ ձևավորված կարծրատիպը, որը հարցման մասնակիցները սահմանեցին իբրև “հայկական մենտալիտետ ” (մտածելակերպ): Համաձայն այդ մտածելակերպի կնոջ տեղը ընտանիքում է, երեխաների կողքին, իսկ կնոջ դերը “տղամարդու շարունակությունը լինելն է”:

“Կինը ոչ թե տան, այլ օջախի պահողն է, և ընտանիքը դեկավարելը շատ ավելի բարդ կառավարման համակարգ է, քան քաղաքական ոլորտը: Նա ունի ընտրության երկու տարբերակ՝ մեկը, այն որ նա ամուսնանում է, անմիջապես սկսում է զբաղվել երեխաներով, այնուհետև զբաղվում է այդ ընթացքում կորցրած գիտելիքների վերականգնմամբ և արդեն ժամանկն է գալիս, որ նա զբաղվի թոռնիկներով: Երկրորդ՝ կինը չի ամուսնանում, և ընտրելով կարիերան՝ պայքարի մեջ է մտնում բիրտ ու կոպիտ արու ցեղի հետ: Այստեղ նա հանդիպում է մի շարք բարդություններ, քանի որ տղամարդիկ նրան տարբեր առաջարկություններ են սկսում անել..., ասել որ արդեն իրենք կօգնեն նրան, որ նա առաջ գնա կամ հաջողության հասնի և այլն”:

Հատկանշական է, որ պաշտոնյաներից մեկը ֆորմալ հարցազրույցի ժամանակ կարևորելով կանանց քաղաքացիական մասնակցությունը և դերը որոշումների կայացման գործընթացում, հրաժեշտ տալիս ասեց. “*Ամեն դեպքում ես չեմ ուզենա, որ իմ կինը ակտիվ լինի*”:

Վերոնշյալ համոզմունքին հակասող տեսակետ են արտահայտել հարցված կանայք: Քաղաքականությունում ընդգրկված որևէ փորձագետ չէր դիտարկում ընտանիքի կնոջ և քաղաքացիական ակտիվության միջև ընտրության անխուսափելիությունը: Ընդհակառակը,

զնտում են, որ մեկը մյուսին լրացնում և անձին դարձնում են առավել կազմակերպված, նպատակային և ընդունելի միջավայրում.

Ոչ, իսկ ես ձեզ կհակասեմ: Ընդհակառակը, երբ որ ես տանն էի և երեխա էի պահում, իմ ամուսինը գրեթե ինձ չէր նկատում, բայց երբ սկսեցի զբաղվել հասարակական գործունեությամբ, ապա նա սկսեց մեծ ուշադրություն դարձնել ինձ:

Այս մտտեցումը գրեթե համընկնում է հարցման արդյուքների ամփոփ պատկերի հետ, որի դեպքում հարցման ենթակա մասնակիցների ավելի մեծ տոկոս խորհուրդ կտար իրենց ընտանիքի կին անդամներին թեկնածությունը առաջարկել ԱԺ պատգամավորի, ՏԻՄ ղեկավարի կամ համատիրության նախագահի պաշտոնում¹⁶:

Հետաքրքիր է, որ հարցվողները մատնանշել են այն փաստը, որ գեղարվեստական գրականությունում կինը միշտ ունեցել է հնուց եկող իր արժանվույն տեղն ու դիրքը: Մինչդեռ ժամանակակից մշակույթը հիմնականում ձևավորվում է ՁԼՄ-ների ազդեցության ներքո՝ հեռուստատեսության միջոցով, որոնք էլ նպաստում են նման “մտածելակերպի” արմատավորմանը:

“Այլ է ՁԼՄ-ների ստեղծած մշակույթը, որտեղ կանանց ավելի շատ են գցում”:

«Գենդերային բռնության հիմնախնդիրը Հայաստանի ՁԼՄ-ների ներկայացման զեկույցը» նույնպես անդրադառնում է այն հարցին, որ “գենդերային խտրական հողվածներում առկա էին բռնության գոհերի նկատմամբ բացահայտ սեքսիստական մտտեցումներ, նկարագրվում և արդարացվում էին գենդերային կարծրատիպերը, կանխակալ էին վերլուծվում փաստերը, քննադատական գնահատականի էին արժանանում բռնության հաղթահարմանը ուղղված տեղական հասարակական և միջազգային կազմակերպությունների ջանքերը:¹⁷”

Էքսպերտային հարցման մասնակիցներից մեկը նշեց, որ որոշումների կայացմանը մասնակցելու հարցը Հայաստանում հավասարապես խոչընդոտ է ծնում, թե տղամարդկանց, և թե կանանց համար՝ հատկապես քաղաքական ասպարեզում: Նրա կարծիքով Հայաստանում քաղաքականությունը խիստ պիտակավորված է, քաղաքականությամբ զբաղվելը “պոռնկություն է”: Նմանատիպ պիտակներն են պատճառ հանդիսանում այն բանի, որ կանայք և երիտասարդները ցանկանում են հեռու մնալ քաղաքական դերեր ստանձնելուց: Պիտակավորումը հարցվողի կողմից դիտարկվեց արհեստականորեն ներմուծված հստակ

¹⁶“Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները” զեկույց, Երևան 2011, էջ 50

¹⁷«Գենդերային բռնության հիմնախնդիրը Հայաստանի ՁԼՄ-ների ներկայացման զեկույց», ք. Երևան, 2010

քաղաքականություն՝ իշխանության լծակներ ունեցող անհատների կողմից, որը նպաստակ ունի կասեցնել առողջներուժի մուտքը քաղաքականություն:

“Մեր մոտ քաղաքականության վրա դրված են պիտակներ, որ նորմալ մարդիկ քաղաքականությամբ չգրադվեն: Պիտակավորումը արհեստական է ներմուծված, որ ոչ բոլորը հավակնեն գրադվել դրանով, օրինակ ասում են . դա անբարոյականություն է, պոռնկություն է, ու սա միտումնավոր է: Ես կարծում եմ, որ հակառակը, պոռնիկներն են լցվել քաղաքականություն ու դրա համար դա է վիճակը: Ներկա պահին շուտով ընտրություններ են, ու ո՞վ է լինելու թեկնածու: Բոլոր հին թեկնածուները շատ են կեղտոտված, բայց նորերն էլ չեն ուզում փորձել: Ես կարծում եմ, որ անգամ իմ մեկ փորձը մտնելու քաղաքականություն կարող է ինձ հետ պահել իմ կարիերայից մի քանի տարով: Մարդիկ կսկսեն մտածել, որ ես այլևս օբյեկտիվ չեմ, ու կսկսեն իմ մասին նույնպես մտածել, ինչ որ մյուս քաղաքական գործիչների մասին”:

Հաճախ, երբ կինն, այնուամենայնիվ, որոշում է դրսևորել քաղաքացիական ակտիվություն և հասարակական գործունեություն է ծավալել, նաբախվում է հասարակության ոչ ադեկվատ վերաբերմունքի. “...ի՞նչ է պարսպ ես մնացել” կամ “քանի քո գլխի տերնես՝ արա, հեսա կամուսնանաս, կարգելեն”:

Հստակ մատնանշվում է նաև այն համոզմունքը, որ կանայք հայ իրականությունում ինքնադրսևորման հնարավորություն չունեն, որի պատճառը ոչ այլ ինչ է քան իրենց հանդուրժող և անտարբեր վերաբերմունքը իրենց իրավունքների և շահերի պաշտպանության հանդեպ:

“Շատ խոչընդոտներ կան կնոջ համար ինքնադրսևորվելու. նրան թերագնահատում են, պիտակավորում են և դա արդյունքն է նրա, որ կինն ինքը շատ քիչ է պաշտպանում իր իրավունքները, քիչ պահանջներ է դնում: Ի վերջո, կինը, և ամեն ոք ստանում է այն, ինչ պահանջում է և այնքան, ինչքան պահանջում է: Մեր կանայք չեն պահանջում, չեն ձգտում, իրենք ձևավորում են այն վերաբերմունքը, որ այսօր կա”:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ մշակութային արժեհամակարգի արգելքների մասին հիմնականում խոսում էին տղամարդիկ և այն կանայք, որոնք երբևէ քաղաքացիական ակտիվություն/նախաձեռնություն չէին դրսևորել: Իսկ քաղաքականությունում ընդգրկված կամ քաղաքացիական նախաձեռնություններով հանդես եկած, կամ էլ ավագանու թեկնածություն առաջադրած և չընտրված կանանցից ոչ ոք չէր զգացել արժեհամակարգի բացասական ազդեցությունը իր գործունեության վրա:

Այս հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ հարցված փորձագետ կանանցից յուրաքանչյուրը մինչ որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելը իր մասնագիտական ոլորտում անցել էր կայացման զգալի ճանապարհ և ձեռք է բերել որոշակի կարգավիճակ և ճանաչում, առավել ևս մինչ քաղաքականությունում ներգրավվելու փորձը հանդիսացել է մի շարք քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակ և կազմակերպիչ:

“Մշակութային խնդիր չկար, օրինակ իմ կողքին էին իմ եղբայրը, ամուսինը: Ոչ որ ինձ չի ասել, թե ինչիդ է պետք: Իմ կերպարին հանրությունը սովոր էր, որ ես ակտիվ հասարակական գործիչ եմ: Բայց թեկնածությունից հետո, ինձ ճանաչեցին նաև որպես երեք երեխաների մայր, ակտիվ կին, նաև՝ քաղաքականապես ակտիվ կին”:

“Կարծրատիպ է, որ ասում են կանայք չեն առաջադրվում, շատ էլ լավ առաջադրվում են, եթե ցանկություն ունեն”:

Հարցվածները “անթույլատրելի” են համարում կանաց համար հենց կանանց կողմից ստեղծվող խոչընդոտները համարելով, որ “կանայք իրենց նմանին թույլ չեն տալիս դրսևորել քաղաքացիական ակտիվություն, ինքնադրսևորվել, քանզի գտնում են, որ եթե իրենք չեն կարող անել, ինչու պետք է մեկ այլ իր նմանն անի”:

Այս փաստի մասին խոսում էին կանանց և սոցիալական գիտնականները:

“Երբ որ առաջադրվում են կանայք, հենց կանայք են դեմ լինում նրանց և չեն ընտրում կին թեկնածուներին: Նախ և առաջ կանայք պետք է ճիշտ առաջադրվեն և հետո փոխենք կանանց վերաբերմունքը իրենց նկատմամբ”:

“Երբ եթերով ցուցադրում էին կին թեկնածուներին, հարևանները և մեր բարեկամները, թեև իրենց կարծիքները համընկնում էին այդ կին թեկնածուների կարծիքների հետ, նրանց չէին ընտրում: Միգուցե նաև նախանձ կա ու անվստահություն”:

Երիտասարդների ցածր մասնակցության պատճառները

Երիտասարդների մասնակցության ցածր տոկոսի պատճառների շարքում թվարկվել են ֆինանսական միջոցների բացակայությունը և հասարակության թերահավատ վերաբերմունքը երիտասարդի կարողությունների նկատմամբ: Ինչպես նշեց փորձագետներից մեկը, “երիտասարդների վիճակն ավելի բարդ է”: Հասարակությունը երիտասարդին դիտում է որպես անփորձ, ինքն իր մասին հոգ տանելու ոչ ոնակ, ինչ մնաց որոշումներ կայացնելու անձի:

“Ես իմ օրինակից ասեմ: Երբ թեկնածությունս դրել էի, շատերն ասում էին նա կյանք տեսած մարդա, արդեն 50 տարեկանա, իսկ դու ջահել ես: Դա ասում էին բնակիչները, բայց կարծում եմ, այդպես էին մտածում նաև մյուս թեկնածուները: Նկատելի է, որ միշտ այդ տարբերությունը դրվում է, որին ես շատ վատ եմ վերաբերվում: Օրինակ, եթե մարդու 18 լրացավ նա և երիտասարդ է և երիտասարդ չէ: Եթե մարդ ինչք ու պատասխանատվություն ունի, արդեն կապ չունի քանի տարեկան է: Եթե նա ուզում է աշխատի, թող աշխատի: Օրինակ, ես աշխատել եմ հենց 18 տարեկանից”:

Այն հարցին, թե ինչու են, համենայն դեպս, երիտասարդները պասիվ մասնակցում քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում, նշվել են նույն “ազգային մենտալիտետը”, անտարբերությունը և համայնքային խնդիրները չիմանալը,

իրազեկվածության ցածր մակարդակը, համախմբվածության պակասը/ բացակայությունը, փորձի և քարոզարշավներ պլանավորելու գիտելիքի պակասը, ինչպես նաև այն, որ Հայաստանում ծնողները սովորաբար չափից շատ են խնամում իրենց զավակներին՝ նվազեցնելով նրանց ինքնուրույնությունը:

“Ձավեշտական փաստ է, երբ շփվում ես Եվրոպական երկրների 15-16 տարեկան երեխաների հետ, սպա զարմանում ես նրանց համայնքային հիմնախնդիրների իմացությամբ և ձևակերպված խոսքով: Մի պահ, որ մոռանաս տարիքները, հետները Դուքով կխոսես: Իսկ մեր 20 տարեկանները, եթե ինքնուրույն քայլ են անում, լսում են - Էդ դու քո գլխի տերն ես, որ ինքնուրույն որոշումներ ես կայացնում”:

Ստորև ներկայացվում են ևս մի քանի հնչեցված կարծիքներ, որոնք արտահայտվել են տարբեր երիտասարդների կողմից, սակայն միանգամայն բացահայտում են այն պատճառները, որոնք երիտասարդների անտարբերության և մասնակցության ցածր մակարդակի են հանգեցնում.

Ինքնավստահության պակաս

Նպատակի , քաղաքացիական պատասխանատվության չգիտակցում

“Երիտասարդները ակտիվ են, բայց չեն գիտակցում, թե ինչի համար են անում դա: Ակտիվությունը ինքնանպատակ է: Օրինակ, լսած չեմ, որ խաղաղ երթեր կազմակերպվեն զուտ երիտասարդների միջոցով, միշտ ինչ-որ մեկը կազմակերպում է”:

Քարոզարշավների մշակույթի բացակայություն

“ՀՀ-ում չկա քարոզարշավի մշակույթ: Իրենք չեն գիտակցում, թե ինչքան կարևոր է և ինչքան մեծ միջոցառում է, և պետք է պրոֆեսիոնալ մտտենալ այդ ամենին: Հայաստանում չկա քարոզարշավի կրթություն”:

Քարոզարշավի ծրագրի կարևորման բացակայություն, հետևաբար, հետազայում վերջինիս իրագործման անպատասխանատու վերաբերմունք

“Պահանջը այլ է, մտածում են, որ թող իմ ծրագիրը լինի այնպիսին, որ այն մյուսի ծրագրին “տա անցնի” : Մինչև չվերանա “իրար կծելու” գաղափարը, նորմալ չի լինի”:

“Եթե նա առանց լավ քարոզարշավի ընտրվում է, էլ ինչի պայքարի”:

Ֆինանսական տեսություններ, նրկարևորն է ֆոնդայթայթման հմտությունների բացակայություն

“Մեր ամենամեծ պրոբլեմը նա է, որ մենք սպասում ենք, որ միշտ մեզ փող տան, մենք պետք է ինքներս հավաքենք այդ գումարները, նախաձեռնություն իրականացնելու համար”:

Որոշումների կայացման գործընթացում կանանց և երիտասարդների ցածր/ պասիվ մասնակցության պատճառների շարքում նշվում են իրազեկված չլինելը մասնակցության ձևերի և մեխանիզմների մասին, անվստահությունը որոշում կայացնողների նկատմամբ, հարցը բարձրացնելու և առաջ քաշելու ոլորտում գիտելիքների և կարողությունների

բացակայությունը կամ անբավարար լինելը, նախկինում ունեցած բացասական փորձը: Շատ կարևոր է, որ ֆոկուս խմբերի և անհատական հարցազրույցների բոլոր մասնակիցները նշում են, որ այս պատճառները հավասարապես տարածվում են նաև տղամարդկանց վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քաղաքականությունը և մասնակցությունը քաղաքական գործընթացներին, մասնավորապես՝ կուսակցություններին անդամակցելը կամ համակրելը, ընտրությունների ժամանակ կուսակցություններից որևիցե մեկի օգտին դիտորդական առաքելություն իրականացնելը կամ նախընտրական շտաբում աշխատելը, շատ դեպքերում դիտարկվում է որպես քաղաքացիական ակտիվություն, իսկ ավելի հաճախ նույնացվում է քաղաքական ակտիվության գաղափարի հետ: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ

- թեկանանց, կթերիտասարդների քաղաքացիական ակտիվությունը հայտեգալիս միայն ընտրություններին նախորդող և անմիջականորեն ընտրությունների ժամանակահատվածում,
- անդամակցումը հասարակական կազմակերպություններին կամ ոչ քաղաքական խմբերին/ շարժումներին չի կապվում կամ շատ քիչ դեպքերում է նույնականացվում “քաղաքական ակտիվություն” գաղափարի հետ:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կառույցների զարգացմամբ զբաղվող բազմաթիվ տեղական և միջազգային կազմակերպությունների տվյալների բազայում առկա և փաստացի գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների և ոչ ֆորմալ քաղաքական ակտիվ խմբերի թիվը վերը ներկայացված սահմանափակումները ավելի քան մտահոգիչ են:

Ինչ խոսք, Հայաստանում գործող մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններն պատակ են հետապնդել խթանել մարզերում կանանց և հատկապես երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը և ներգրավվածությունը իրենց իսկ առնչվող որոշումների կայացման գործընթացում: Այդ ամենը արվել է մի շարք նպատակային ծրագրերի միջոցով, որոնք ուղղված են եղել կանանց և երիտասարդների կարողությունների զարգացմանը, առաջնորդական հմտությունների զարգացմանը, քաղաքականության ձևավորման և որոշումների կայացման ոլորտում մասնակից լինելու համար անհրաժեշտ գիտելիքների ավելացմանը և համապատասխան հմտությունների ձևավորմանը: Այս ծրագրերի իրականացման արդյունքում ստեղծվել են և մինչ օրս գործում են բազմաթիվ քաղաքական նախաձեռնություններ, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր՝ կամավորականության հիման վրա:

Քաղաքացիական ակտիվությունը ենթադրում է վճարովի և կամավորականության հիմունքներով ցուցաբերվող քաղաքական ակտիվության ձև, մինչդեռ կամավորականությունը հանդիսանում է քաղաքացիական ակտիվություն/ մասնակցություն ցուցաբերելու տարբերակներից մեկը (Միչելսոն, 2002)։

Հատկանշական է, որ հասարակական կազմակերպություններին անդամակցող և առաջնորդ հանդիսացող կանանց թիվը բավականին մեծ է և կանայք այս ասպարեզում բավականաչափ լավ են ներկայացված։ Այս հանգամանքը, թերևս, բացատրվում է նրանով, որ այստեղ կանանց ինքնառաջադրման և նախաձեռնելու հնարավորությունները չեն սահմանափակվում որևէ տեսակի պայմանականություններով և թողնված են կանանց ազատ կամքին։

Հազարամյակի զարգացման նպատակների համաձայն՝ գենդերային հավասարության հասնելու հարցում առանցքային դեր է խաղում երկու գործոն՝ կանանց կրթական մակարդակը և նրանց ներկայացվածությունը իշխանության մարմիններում։ Կանանց ներկայացվածության վերլուծությունը պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր մակարդակներում վեր է հանում իշխանության հայրիշխանական բուրգի գոյությունը։ Այն բնորոշվում է բարձր՝ որոշումների կայացման համար պատասխանատու պաշտոններում կանանց բացակայությամբ և ավելի ընդգրկուն ներկայացվածությամբ միջին և ցածր մակարդակի պաշտոններում, որոնք կազմում են այդ բուրգի հիմքը և չեն մասնակցում քաղաքական որոշումների ընդունման գործընթացին։

Մինչդեռ քվոտաների հարցը անդրադառնում է կանանց ընտրացուցակներում ներգրավելու և ընտրված լինելու հավանականությունը բարձրացնելու հանրապետական մակարդակում, մարզային և համայնքային մակարդակներում կանանց մասնակցությունը խթանող պետական որևիցե քաղաքականություն չկա։ Առանձին տեղական և միջազգային կազմակերպություններ ներ են դնում կանանց ներգրավելու այլընտրանքային մոդելներ, որոնք շատ քիչ դեպքերում են հաստատութենականացվում/ ինստիտուցիոնալիզացվում, կամ, անգամ այդ դեպքում որևիցե ազդեցություն երկարաժամկետ առումով չեն ունենում։

Ինչպես արդեն իսկ նշվել էր, երիտասարդների մասնակցության/ներգրավվածության հիմնական ձևը քաղաքացիական նախաձեռնություններում հանդես գալն է, այդ թվում պետական կառույցներին կից ստեղծված խորհուրդների, կամ խորհրդակցական խմբերի կազմում ներգրավվելու միջոցով։ Նմանատիպ գործունեությունը թույլ է տալիս երիտասարդներին ոչ միայն մասնակից դառնալ որոշումների կայացման գործընթացին, այլև նախաձեռնել և առաջնորդել այնպիսի քաղաքականությունների մշակումը, որոնք բխում են հենց իրենց՝ երիտասարդների շահերից։ Նմանատիպ քարոզարշավների հաջողությունը թույլ է տալիս հուսալ, որ երիտասարդները տիրապետում են իրենց շահերը պաշտպանելու նպատակով քարոզարշավներ պլանավորելու և իրականացնելու հնարներին, ինչպես նաև

գիտակցում են սեփական ձայնի նշանակությունը ապագան կերտելու հարցում: Մտահոգիչ հանգամանքը միայն նրանում է կայանում, որ ակտիվ երիտասարդների շրջանակը շատ նեղ է, և նախաձեռնող դերերում մշտապես հանդես են գալիս միևնույն մարդիկ, մինչդեռ երիտասարդների մի ստվար զանգված այդպես էլ մնում է “հետին պլանում” և չի էլ փորձում գիտելիքներն ու հմտությունները կիրառել գործնականում:

Այսպիսով՝ Վերը ներկայացված դրույթները թույլ են տալիս եզրահանգել, որ Հայաստանում առկա են ինստիտուցիոնալ հիմքեր, որոնք հնարավորություն են ընձեռում կանանց և երիտասարդների քաղաքականության մշակման գործընթացներում ներգրավվելու համար, լինի դա քաղաքական, թե քաղաքացիական ակտիվություն դրսևորելու միջոցով: Այդպիսիք են՝ քվոտաների առկայությունը, հասարակական կազմակերպություններ հիմնելու և դրանց անդամակցելու ազատությունը, որոշումների կայացման մասնակցային մշակույթի աստիճանական զարգացումը: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ վերը ներկայացված հիքները տեսական ու փաստաթղթային մակարդակում են, մինչդեռ դրանց գործնական արտացոլումը սաղմնային փուլում է գտնվում: Կանայք և երիտասարդները շարունակում են նվազագույնս ազդեցություն ունենալ որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում, քանի որ մշակութային և սոցիալ-տնտեսական գործոնները նրանց անհավասար ելակետային պայմաններում են առաջարկում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ/

ԻՆՉՊԵՍԻԹԱՆԵԼ ԿԱՆԱՆՑՆԵՐԻ ՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆ ԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պահպանել օրենքներով նախատեսված այդ դրույթները, որոնք ուղղակիորեն խրախուսում են բնակչության մասնակցությունը որոշումների կայացմանը և քաղաքականությունների մշակմանը: Խրախուսել և մշակել այն պիսիմեխանիզմները, որոնք կընդարձակեն երիտասարդների կանանց տարբեր մակարդակում որոշումների կայացմանը ներգրավելու հնարավորությունները, օրինակ տեղեկատվության տարածման թափանցիկ և արդյունավետ ուղիներ իրնտրության, հանրային քննարկումների իրականացման միջոցով: Այդպիսի մեխանիզմների օրինակ կարող է հանդիսանալ գործող և պարբերաբարթարմացվող էլ.կայքը, հայտարարությունների և արձանագրությունների ցուցատախտակը, բացդռների օրվամշակույթը:

Ստեղծել կանանց երիտասարդների ներկայացուցչական հանձնախմբեր, որոնք կհանդիսանան ավագանու հետ համագործակցող կողմ՝ որոշումների կայացման փուլում կարիքի գնահատման և խորհրդատվություն տրամադրելուն պատակով: Խորհրդակցական մարմնի դերերը կարող են ներառել՝

- կարիքիուսումնասիրություն,
- կարիքիվերլուծությաններկայացումավագանուն՝ քաղաքականություններինշակմաննպատակով,
- անհրաժեշտությանդեպքումհամայնքայինմակարդակումորոշումկայացնողների վրասագրեցությանգործադրում,
- հետադարձկապիապահովումնհաշվետվողականությունշահառուխմբերին:

Հնարավորություններստեղծելերիտասարդներիհամարորոշումներկայացմանտրոսումսեփականուժերըփորձելուն, ինչուոչ, նանփորձձեռքբերելունհետանալուհամար: Որպեսօրինակ,ներդնելայսպեսկոչված “internship” – ին “shadowing a politician/ public actor” մեխանիզմները, երբերիտասարդըներգրավվումեորոշումներկայացմանն/ կամքաղաքականություններինշակմանգործընթացներումկամավորականհիմունքներով՝ տարբերառաջադրանքներկատարելումիջոցովօգուտէտալիսայնկատույցին/ անհատին, որինկցվածէ, նմիաժամանակգարգացնումէսեփականհմտություններընկարողություններըտվյալտրոսում:

ՆերգրավելԶԼՄ-

ներիներիտասարդներինկնոջդերիբարձրացմաննուղղվածքարոզարշավումնախաձեռնություններում: օգտագործելովԶԼՄ-

ներիներուժը,ձևավորելքաղաքացիապեսակտիվկանանցներիտասարդներինկատմամբհասարակությանլայնշերտերիշրջանումդրականդիրքորոշում՝

տեսնելունրանցորպեսփոփոխությունառաջացնողսագրեցությունգործադրողակտիվդերակատարներ: Օրինակ,

մշակելևհետարձակելմասնավորապեսկանանցներիտասարդներիհաջողությունըարձանագրողծրագրեր, ներկայացնելդրականփոփոխություններառաջացրածհաջողվածփորձը:

ԽրախուսելԶԼՄ-ներինհատուկպայմաններառաջարկելկիններիտասարադթեկնածուներին՝ այսպեսկոչված “դրականխտրականություն” ցուցաբերել:

Նմանօրինակկարողէհանդիսանալընտրություններինթացքումկանանցսոցիալականգովազդներինտեսանյութերիանվճարկամզեղչայինպայմաններառաջարկելը:

Զարգացնելկանանցներիտասարդներինկարողություններըքարոզարշավներպլանավորելունևիրականացնելուհամար:

Նմանատիպկարողություններիզարգացմանմիջամտություններըկարողեններառել, բայցչսահմանափակվելքաղաքացիականքաղաքականքարոզարշավներիպլանավորման,

քարոզարշավներինհամարֆորդիայթայթման, ընտրականգործընթացներինմեխանիզմների, ՀՀ-իգործադիրևօրենսդիրհամակարգի, բանակցություններինվարման, ԶԼՄ-

ների հետարդյունավետ աշխատանքի,
հռետորության վերաբերյալ դասընթացների կազմակերպումն խորհրդատվություն:

Շարունակել այնպիսի ծրագրերի իրականացումը,
որոնք նպաստում են կանանց ներիտասարդների կարողությունների զարգացմանը,
նրանց ակտիվ ներգրավմանը որոշումների կայացման գործընթացներում նախաձեռնությունն
երում տեղական նազգային մակարդակում:
Կենտրոնանալ այնպիսի ծրագրերի իրականացման վրա,
որոնք չեն սահմանափակվում միայն գիտելիքներ տրամադրելով նիրազեկության բարձրացմամբ,
այլ նախատեսում են.

- կանանց ներիտասարդների կայն ածավալմոբիլիզացումն ներգրավում իրենցի սկզբնական
րաբերվող խնդրին ներիվերիան մանկուծ ման գործընթացներում,
- խրախուսում են որոշում կայացնողների հետ տղակիերկ խոսության մեջ ներգրավում
մեզին ու մենայնպիսի հմտություններով,
որոնք անհրաժեշտ են սեփական շահերը ինքնուրույն պաշտպանելու համար:
- Նմանատիպ ծրագրերը պետք է հստակ թիրախավորեն ներիտասարաների նկատմամբ
ցվերաբերմունքի փոփոխություն, պասիվ “սպառողական”
մտածելակերպից՝ ակտիվ “սեփականատիրականի”,
երբ գործընթացի մասնակիցները իրենց լիարժեք դերակատարներ են համարում նազգ
ում են, որ կարող են փոփոխության հասնել իր իրազեկումը համարնող հանուր շահի:

Շարունակել այնպիսի օրենքներ ընդունումը նմիջազգային կոնվենցիաների նմիանալու գործընթացը,
որոնք խրախուսում են կանանց ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում:

Հնարավորություններ ստեղծել կանանց ներիտասարդներին միատրվելու/համախմբվելու “իրենց
նմանների” հետ, քանի որ վերջիններս իրենց ավելի “ուժեղ կարող” են զգում,
երբ իրենց կողքին տեսնում են մարդկանց,
որոնք կիսում են իրենց մտահոգությունները նգաղափարները նուն են համընկնող շահեր:
Քաղաքական ասպարեզում տեսանելի իրքունեցող կանանց փորձը վկայում է այն մասին,
որ վերջիններս մինչ քաղաքական գործիչ դառնալը անցել են քաղաքացիական առաջնորդության ուղի:
Հենց այդ փորձառությունն է,
որ բարոյապես հոգեպես նախապատրաստել է նրանց նոր առաքելության իրականացմանը նհասարակության կողմից նրանց նոր դերում ավելի հեշտ /առանց ստիգմաների/ ընկալմանը:

Համախմբել նմիավորել տարբեր հասարակական կազմակերպություններ իջանքերը՝
երիտասարդների նկատմանց հիմնախնդիրները ավելի նպատակային կազմակերպված լուծելուն

պատակով:

Վերջին ժամանակահատվածում ՀՀ-

ում հաջողված քաղաքացիական նախաձեռնությունները վկայում են,
որ ցանցերում և կոալիցիաներում հանդես եկող կազմակերպություններն ավելի շահակալից և ստեան էլիենդարձում խնդիրը,
որն էլ ավելացնում է որոշում կայացնողների վրա ազդեցության չափը¹⁸:
Այդ նախաձեռնությունները նպաստել են կանանց շարժման ձևավորմանը,
նրանց նախաձեռնությունները լուծելու մեծ մասը շտաբի միջոցով, մասնավորապես՝
պետության հետ համագործակցության և երկխոսության հարցում:

Նպաստել է ն տրական քարոզարշավի մշակույթի ձևավորմանը,
երբ քարոզարշավի համարանհրաժեշտ միջոցները ձեռք էն բերվում այս կամ այն քաղաքական ուժ
ից, այլիայի թայթվում են հարազատներից,
ընտանիքի կամ հանրության այլանդամներից: Նման մոտեցումը թույլ կտա գերծնալորոշումներ
ի կողմնակալ կայացումից իօգուտ այս կամ այն քաղաքական ուժի:

Խրախուսել կրթական ծրագրերում այն պիսիթեմաների ընդգրկումը,
որոնք միտված կլինեն երկխոսելու,
խնդրիները վերհանելու և լուծումներ առաջարկելու և բանակցելու կարողությունները ժողոված,
քաղաքացիական ակտիվություն և ցուցաբերող և ակտիվ քաղաքացիական շարժումները ընդգրկող
առաջնորդներ ձևավորումը:

Այդ պիսիթագրերը կնպաստեն ակտիվ և նախաձեռնող անձի ձևավորմանը,
որը մրցունակ կլինի նորաշխարհ քաղաքական իրականության մեջ,
քաղաքացու որակներ կունենան և կարողանա դրանք իրագործել: Հայաստանում քաղաքացիական
նհասարակությանն ժողովրդավարության կայացմանը նթափում:

Կրթական հաստատություններում, ավագ դպրոցներում մասնավորապես,
ստեղծել կարիերայի կենտրոններ,
որպես երիտասարդների նու, հատկապես աղջիկների նառաջնորդական դերի համար նախապա
տրաստելու արդյունավետ նշարունակական մեխանիզմ:
Մոցիալական անցման և ադապտացիայի նոր պայմաններում կինն ավելի արագ է դրսևորվում որպ
ես անհատականություն,
էթե անցել է իդերություն դպրոցը՝ տանը կամ որևէ այլ կրթական հաստատությունում,
որտեղ ոչ թե ճնշվում են նրակազմակերպչական կարողությունները,
այլ ազատ գործելու և հարավորություններ տրվում:

Տղաների և աղջիկների ընդգրկումը վաղ տարիքում տարբեր ոչ ֆորմալ կրթական ծրագրերում և նա

¹⁸18 ժամանակավոր անգործունակության նպաստի դեմ քաղաքացիական շարժում

խաձեռնություններում թույլ կտա արմատավորել հանդուրժողականությունը,
զենդերային իրավահավասար հասարակության հնարավոր լինելը,
երբ դեռ չեն ձևավորվել համապատասխան կարծրատիպեր,
երբ դեռ չի արմատացել անտարբերությունը հասարակական կյանքի բացասական երևույթներին կատմամբ¹⁹:

Տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներդրմանը կայացված դրոշմները նշվում են մանր ստորակարգական ինքնաշարժում:

Նպաստել կանանց ներդրմանը կանցմանը տեսական շխառնության հավասարաչափ բաշխվածությամբ,
ապահովելով երկու սեռերի համար սոցիալական և տնտեսական ռեսուրսների մատչելիությունը:

¹⁹ “Ասոցիացիայի մասնաճյուղերի գործունեությունը Լոռու մարզում”, “Համալսարանական կրթությամբ կանայք”, N37, 2011

Գրականություն

Ազգային ծրագիր 2004-2010 թթ.,

“Ասոցիացիայի մասնաճյուղերի գործունեությունը Լոռու մարզում”,

“Համալսարանական կրթության բնագավառ”, N37, 2011

«Գենդերային բռնության հիմնախնդիրը Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացման գեկույց», ք. Երևան, 2010

Իջևանքադաքի երիտասարդության քաղաքականությունը 2007-2010 թ

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին օրենքի նախագիծ

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի մասին ՄԱԿ-

ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.:

Այլընտրանքային գեկույց: Համալսարանական կանանց ասոցացիա,

Գենդերային հոտազոտությունների կենտրոն: ք. Երևան, 2007

Կանանց և երիտասարդների հիմնահարցերով զբաղվող ոչ առևտրային կազմակերպությունների էլեկտրոնային կայքեր

Կանանց նկատմամբ խտրականության հաղթահարումը՝ որպես քաղաքական հիմնախնդիր, Երևան 2010, Համալսարանական կրթության բնագավառն ասոցացիա

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ

Հայեցակարգ Գենդերային քաղաքականության, Երևան 2010,

Հայաստանի հանրապետության կառավարություն

